

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

**ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍԻ  
ԻՐԱՆԱՅԱՅ  
ՄԻՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԱՐ  
ՀՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ  
ՏՕՆԱԽՄԲԵՅ ԻՐ  
55 ՏԱՐՈՒԱՅ ԵՐԱԶԻՆ  
ՆՈՒԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ**

**ՏՕՒԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Լոս Անճելըսի Իրանահայ Միութիւնը օժտուեցաւ մշակութային նոր կեդրոնով մը, որուն պաշտօնական բացումը կատարեց Շաբաթ 8 Հոկտեմբեր 2011-ին, գաղութիս հայաշատ կեդրոններէն Կլեմտէյլ ֆաղաֆի մէջ: Ներկայ կեդրոնի բացումով, Լոս Անճելըսի Իրանահայ Միութիւնը կը նուիրագործէր աւելի քան յիսուներեք տարի շարունակ փայփայած երազ մը, որուն հրաշակներտ իրագործումը հպարտութեամբ կը գեղու համանուն միութեան մէն մի անդամի, ղեկավարի, նուիրատուի, բարերարի եւ նաեւ, ինչու է՝ մէն մի հայու սիրտը:

Դեռեւս հինգ տասնամակնեք առաջ Հոլիվուտի մէկ աննշան փողոցի մը վրայ փոքր, այլ ոչ հրապուրիչ սենեակի մը մէջ ամփոփուած, ազգին ծառայութեան կոչուած միութիւն մը եղած էր Լոս Անճելըսի Իրանահայ Միութիւնը: Անոր հայապահպանման առաքելութիւնը միշտ եղած էր գործարարական ու տարածելի մշակույթը: Ամերիկայ գաղթող մեր ժողովուրդի կարիքները գաւակներուն ջամբել հայեցի կրթութիւն: Վերջապէս, տարածել բարեսիրական գործունէութիւն: Եւ այս բոլորը՝ որպէսզի հայը՝ հայ, հայասէր եւ հայրենասէր պահուի ծանօթ այս ընդարձակ «Ձուլող Կաթսայի» մէջ:

Այլի քան երեսուն տարիներու վրայ տարածուած անդուլ, հետեւողական եւ հատուտոր աշխատանքը առիթ կ'ընծայէ միութեան, տեղափոխուելու Պրեմտ փողոց, Կլեմտէյլ ֆաղաֆր, ուր աշխատանքային աւելի ձեռնարկ պայմաններու ներքեւ կարելի կը դառնայ տակաւ ընդարձակել միութեան կրթական, մշակութային եւ բարեսիրական գործունէութիւնը, իր միութեանական անդամացանկին վրայ գործօն անդամներու թիւը հասցնելով հազարի: Արդարեւ, Իրանահայ Միութիւնը կ'օժտուի երկու հարիւր աշակերտներ հաշուող Շաբաթօրեայ դպրոցով: Ուրտունը հինգ անդամներէ բաղկացած երգչախումբով: Հայկական պարի դասարաններով: Տասը հազար հայերէն գիրք պարունակող գրադարանով: Երիտասարդական եւ Արուեստի աշխատանքային բաժանմունքներով եւ վերջապէս, ուշադրութիւն գրաւոր նախաձեռնութեամբ մը, որ կը կոչուի՝ «Փրկելը»

Շաբ.ը էջ 28

## ԵՐԵՒԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆԻՔՈԼԱ ՍԱՐՔՈՋԻ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՂՄԷ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՄԵՆՈՒՄԸ

Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզի Ուրբաթ, Հոկտեմբեր 7-ին Սերժ Սարգսեանի հետ միատեղ մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց, որ Հայաստան կատարած իր այցելութիւնը կը նկատէ կարեւոր իր համար:

Սարքոզիի համաձայն, Ֆրանսայի մէջ մեծ ուշադրութեամբ կը հետեւին Հայաստանի մէջ կատարուող իրադարձութիւններուն, նկատի առնելով հայկական մեծ համայնքի առկայութիւնը, որ մեծ դերակատարութիւն ունի Ֆրանսայի մէջ:

Նիքոլա Սարքոզի ընդգծեց, թէ հայերը լաւ գիտեն, որ Հայոց ցեղասպանութեան ժամանակ Ֆրանսան ձեռք երկարեց հայերուն, եւ այսօր՝ 2011-ին ալ Հայաստան մինակ է, քանի որ Ֆրանսան առանձնապէս կապեր ունի Հայաստանի հետ:

«Ես ըսի, որ նախագահ Սերժ Սարգսեան իր ճանապարհը շարունակէ դէպի խաղաղութիւն՝ խաղաղութիւն Ատրպէյճանի հետ, ինչ որ կը բխի երկու երկիրներու շահերէն: Իհարկէ, ես նաեւ Հայաստանի նախագահին քաջալերեցի շարունակել երկխօսութիւնը Թուրքիոյ հետ: Անընդունելի է, որ 2011



Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզի ջերմ ընդունելութեան կ'արժանանայ Երեւանի քաղաքացիները:

թուականին Թուրքիոյ հետ սահմանը փակ մնայ», - ըսաւ Նիքոլա Սարքոզի, աւելցնելով, որ կ'աջակցի խաղաղութեան հաստատմանն ուղղուած Սերժ Սարգսեանի ջանքերուն:

Պատասխանելով Ֆրանսայի մէջ լոյս տեսնող հայկական «Լէ Նիւվէլ Տ'Արմէնի» հանդէսի հար-

ցին, որ եթէ Թուրքիա չձանձնայ Հայոց ցեղասպանութիւնը, ապա ի՞նչ քայլերի կ'ընայ առնել Ֆրանսան, Սարքոզի ըսաւ, որ հաւաքական ժխտումը աւելի ցաւալի է, քան անհատական ժխտումը: Այդ չի նշանակէր, որ անձնական ժխտում-

Շաբ.ը էջ 4

## ՍԱՐԳԻՍ ՍՈՂԱՆԱԼԵԱՆԻ ՄԱՐԸ

Հոկտեմբեր 5-ին, Ֆլորիտա նահանգի Հիւալա քաղաքի հիւանդանոցին մէջ, 82 տարեկանին սրտի կաթուածով մահացած է գէնքի նշանաւոր վաճառական Սարգիս Սողանալեան:

80-ականներուն իրաքի եւ իրանի միջեւ տեղի ունեցած երկարատեւ պատերազմի տարիներուն Սարգիս Սողանալեան գլխաւոր գէնք մատակարարողն էր Սատամ Հիւսէյնի բանակին, վաչելելով ամերիկեան կառավարութեան եւ գաղտնի սպասարկութիւններու հովանաւորութիւնը:

1990 թուականին, երբ Սատամ Հիւսէյն գրաւեց Քուէյթը ու նախագահ ճորճ Պուշ կը պատրաստուէր յարձակելու իրաքի վրայ, Սողանալեան հրապարակաւ դէմ արտայայտուեցաւ ամերիկեան այդ միջամտութեան, արժանանալով իր հովանաւորներու դժգոհութեան, որոնք չուշացան զինք մեղադրելու «այսօրէն գէնք վաճառելու» մէջ: 1993-ին Սարգիս Սողանալեան ամերիկեան դատարանի կողմէ դատապարտուեցաւ 6,5 տարուայ բանտարկութեան: Ան երկու տարի բանտ մնալէ ետք, խորհրդաւոր պայմաններու մէջ ազատ արձակուեցաւ:

Իր փառքի օրերուն Սարգիս Սողանալեան կը ճամբորդէր սեփական հսկայ օդանավով ու սիրալիր ընդունելութեան կ'արժանանար բազմաթիւ երկիրներու ղեկավարներուն ու ամերիկացի ծերակուտականներու կողմէ:



Սարգիս Սողանալեան

Սարգիս Սողանալեան հայկական շրջանակներու մէջ ծանօթ էր նաեւ որպէս բարերար, որ 80-ական թուականներուն իր կատարած մեծագումար նուիրատուութիւններով օժանդակեց հայկական բազմաթիւ կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու:

Սարգիս Սողանալեան ծնած էր 1929-ին, Սուրիոյ մաս կազմող Իսքէնտէրուն նահանգին մէջ: Շրջանը հետագային Թուրքիոյ տիրապետութեան անցնելէ ետք, ան ընտանեօք փոխադրուած էր Պէյրութ, ուր անցուցած էր իր երիտասարդական տարիները: Ամուսնացած էր եւ ունէր երկու զաւակ:

## ՇԱՌԸ ԱԶՆԱԿՈՒԻ ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՑԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ֆրանսահայ մեծանուն երգիչ եւ Զուլիգերիոյ մօտ Հայաստանի դեսպան Շառլ Ազնաւուր «Լէ Նիւվէլ Տ'Արմէնի» պարբերականին տրուած հարցազրոյցի մը ընթացքին, բաւական յանդուգն տեսակէտներ յայտնած է Հայկական ցեղասպանութեան եւ հայ-թուրք յարաբերութիւններու մասին, գարմանք յառաջացնելով շատերու մօտ:

Երգիչի կարծիքով, նկատի ունենալով Հայաստանի շահերը եւ Թուրքիոյ կողմէ ընդդիմութիւնը՝ ցեղասպանութիւն բառի օգտագործման դէմ, պէտք է մէկ այլ բառ գտնել՝ ցեղասպանութեան մասին խօսելու ժամանակ:

«Ցեղասպանութիւն բառը կը խանգարէ, եւ պէտք է ըսեմ, որ ինձի եւս կը խանգարէ: Եթէ Թուրքերը ազնուութիւն ունենան ըսելու, թէ իրենց խանգարող ցեղասպանութիւն բառն է, ապա մենք մէկ այլ բառ կը գտնենք, որպէսզի սահմանները բացուին», - վերջերս ըսած էր Ազնաւուր ֆրանսական հեռատեսիլի կայաններէն մէկուն հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին:

Ան բացատրելով իր այդ միտ-

Շաբ.ը էջ 4

# ՇՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ 20 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՎԵՐԱԴԱՐՁԱԲ ՐԱՅԱՍՏԱՆ

1924 թ. նախկին Խորհրդային Միության ողջ տարածքում իր գործունեությունը դադարեցրեց հայ իրականության առաջին ֆաղափական կազմակերպությունը՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցությունը:

Հնչակեան կուսակցության անդամների մի չնչին մասը ստիպողաբար անդամագրուեց բոլշևիկեան կուսակցությանը, մնացածները կուլ գնացին ստալինեան մասդացին:

ՄԴՀԿ-ն ծնունդ է հայ ժողովրդի ծոցից, ծառայել նրան, դառնալով 19-րդ դարավերջի հայ ազգային ազատագրական պայքարի դրոշակակիրը: Կուսակցությունն իր ծնած ժողովրդի նման նաշակել է թուրքական բռնապետության բոլոր դառնությունները, արհաւիրքներն ու փորձությունները, մոռնել կախաղանների վրայ, տանջուել բանտերում, արտաքուրստերում: Ցեղասպանությունից ու հայրենագրկումից յետոյ, ցրուելով աշխարհի չորս կողմերը, Կուսակցությունն անդավաճան կերպով շարունակեց ծառայել ժողովրդին, վառ պահելով իր Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսլականը:

Զրկուելով հայրենական հողից, հայրենիքում ֆաղափականութեամբ գրադուելու իր առաքելութեան իրաւունքից, Հնչակեան կուսակցությունը աշխարհասփիւռ գաղութներում իր գործունեութեան առանցք դարձրեց հայապահպանումը, նոր սերնդին ուրծացումից՝ սպիտակ եղեռնից փրկելու դժուարին գործը:

Հայկական բազում գաղթօջախներում կուսակցութեան հովանու ներքոյ բացուեցին մանկապարտէզներ, մանկատներ, դպրոցներ, մշակութային, մարզական, առողջապահական հիմնարկություններ: Տպագրուեցին շուրջ չորս տասնեակ անուն թերթեր ու ամսագրեր, որոնց բովանդակութեան հիմնական թեման կորուսեալ Հայրենիքն է, նրա անգին պատմա-նարտարապետական յուշարձանները, մեր աւերուած ու պղծուած վանքերն ու եկեղեցիները:

Իրենց նոր հայրենիքներում բազմաթիւ հնչակեաններ ձեռք բերել մեծ հեղինակություն ու համբաւ, ընտրուել օրէնսդիր մարմիններում, գրադեցրել բարձր պետական պաշտօններ:

Հայաստանի Հանրապետութեան անկախացումից յետոյ, Հնչակեան կուսակցությունը անմիջապէս վերադարձաւ Հայրենիք եւ իր նորացուած ծրագրով սկսեց շարունակել կոպտօրէն ընդհատուած ֆաղափական գործունեությունը, մի նոր երանգ աւելացնելով հայրենիքի ֆաղափական դաշտի ներկայակակին:

1991 թ. Հոկտեմբերի 11-ին մեր նորանկախ հայրենիքի Արդարադատութեան նախարարությունը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի կազմակերպությունը գրանցեց որպէս ինքնուրոյն ծրագրով ու կանոնագրով գործող կազմակերպություն: Այդ օրուանից անցել է շուրջ երկու տասնամեակ: Որպէս կենդանի օրգանիզմ, այդ տարիներին կուսակցությունն ունեցել է յաջողություններ, սխալներ, ապրել կողմնակի ուժերի կողմից դրդուած պառակտման դառնությունը: Բայց 124 տարուայ պատմական փորձը, բազում կախաղաններն ու բանտարգելումները մեզ կոփել ու ամրացրել են եւ ամէն մի դժուարությունից մեմբ դուրս եմբ եկել մաքրագործուած ու կազմակերպուած:

Մեր կազմակերպութեան յոբելեանական այս օրերին մեմբ երախտագիտութեամբ եմբ յիշում կուսակցութեան առաջին ղեկավարներին եւ վետերաններին:

Հնչակեան կուսակցությունը՝ Հայաստանի եւ Սփիւռքի իր կազմակերպական կառոյցներով, շարունակում է մնալ ամուր եւ միասնական մի մարմին, որը վեճական է ֆաղափական պայքարի, կուսակցութեան ծրագրերի իրականացման փնտրարհին:

Մեմբ հաւաստում եմբ, որ Հնչակեան կուսակցությունը հաւատարիմ է արդարութեան, հաւասարութեան, դեմոկրատիայի, ազատութեան, սոցիալական համերաշխութեան, հայրենասիրութեան, իրաւական ու սոցիալական պետութեան կերտման ծրագրային հիմնադրոյթներին, կ'անի ամէն ինչ մեր հայրենիքը դարձնելու էլ աւելի հզօր, տնտեսապէս բարգաւաճ պետութիւն, որն ինչպէս անշեղ ասուպ դէպի իրեն կը ձգի իր աշխարհասփիւռ գաւակներին:

Կեցցէ Հայաստանի Հանրապետությունը  
Կեցցէ Հնչակեան Կուսակցությունը  
Հնչակեան կուսակցութեան վարչություն  
12-ը Հոկտեմբերի, 2011 թ., ֆաղափամայր երեւան

# ՖՐԱՆՍԱՆ ՈՒՐԱԽԱՑՐԵԼ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

ՅԱԿՈՐ ԲԱԴԱԼԵԱՆ

Էջմիածնում մասնակցելով քաղաքի օրուայ առիթով հանդիսաւոր հաւաքին, Սերժ Սարգսեանը ելոյթ ունեցաւ եւ հաւաքի մասնակիցներին շնորհաւորեց ֆուտպոլի յաղթանակի եւ Նիքոլա Սարքոզիի արած յայտարարութիւնների առիթով: Ֆուտպոլի յաղթանակը հասկանալի է, բայց ինչ է ասել Սարքոզին, որ Սերժ Սարգսեանը այդ կապակցութեամբ շնորհաւորում է բոլորին:

Ի դէպ, ֆուտպոլի հանդիպման ժամանակ էլ ամէն կողմից յետոյ ռեժիսորը պարտք էր համարում ցոյց տալ, թէ ինչպէս է ուրախանում Սերժ Սարգսեանը, ով մի քանի ժամ առաջ էր ճանապարհել Սարքոզիին: Ու քանի որ դրանից մէկ օր անց Սարգսեանը բոլորին շնորհաւորում է Սարքոզիի արած յայտարարութիւնների առիթով, սկսում եւ մտածել, թէ ֆուտպոլի ամէն կողմից յետոյ նա միայն դրա համար էր ուրախանում, թէ պարզապէս դեռ Սարքոզիի թողած ուրախութեան ազդեցութեան տակ էր:

Իսկ Սարքոզին Երեւանում ասել է, որ Թուրքիան պէտք է ճանաչի ցեղասպանութիւնը, այլապէս Ֆրանսիան դրա հերքումը օրէնքով քրէտրէն հետապնդելի կը դարձնի: Մէկ էլ ասել է, որ Ֆրանսիան Հայաստանին կ'օգնի էներգետիկ այլընտրանքային ռեսուրսների հայթայթման եւ նոր առումակայանի ստեղծման հարցում: Որեւէ այլ նշանակալից յայտարարութիւն Ֆրանսիայի նախագահը Երեւանում կարծես թէ չի արել:

Աւելին, Ցեղասպանութեան մասով յայտարարութիւնները հազիւ թէ հնարաւոր լինի արտառոց համարել: Ֆրանսիայի դիրքորոշման մասին յայտնի է վաղուց, այդ երկիրը առաջինն է Ցեղասպանութիւնն օրէնքի տեսքով ճանաչել: Նաեւ յայտնի է, որ Ֆրանսիան հանդէս է գալիս Եւրամիութեանը Թուրքիային անդամակցելու դէմ, ընդ որում միակ պայման չդնելով ցեղասպանութեան ճանաչումը եւ հայթուրքական սահմանի բացումը: Ֆրանսիան այսպէս ասած սկզբունքօրէն է դէմ Թուրքիայի անդամակցութեանը: Այդ իմաստով, հայթուրքական թեմայով արուած յայտարարութիւնները հազիւ թէ անակնկալ համարուեն:

Իսկ ահա էներգետիկայի մասին յայտարարութիւնները թերեւս իսկապէս արտառոց են, աննախադէպ: Դժուար է յիշել, թէ ասենք վերջին անգամ երբ է որեւէ արեւմտեան տէրութիւն այդպէս հրապարակային հետաքրքրութիւն ներկայացրել Հայաստանի էներգետիկայի հանդէպ եւ երբ է Հայաստանն այդպէս բացառապէս քննարկել այդ հարցը: Հայաստանի էներգետիկան արդէն տեւական ժամանակ է, ինչ գտնուած է բացառապէս ռուսական մենաշնորհի ներքոյ եւ այլոց հետ, այն էլ ոչ արեւմտեան զարգացած երկրների, այլ ասենք Իրանի հետ, հարցերը քննարկուել են Ռուսաստանի ուղղակի կամ անուղղակի անբեկանելի մասնակցութեամբ:

Բայց հայթուրքական քննարկումներում կարծես թէ Ռուսաստան չկայ: Դա ինքնին արդէն շնորհաւորելու, թէեւ միւս կողմից նաեւ անհաւատալի մի բան է: Բայց էականն ի հարկէ դա չէ, այլ Ֆրանսիայի հետաքրքրութիւնը թէ Հայաստանի նոր առումակայանով, թէ

նաեւ յայտարարութիւնն այլընտրանքային էներգետիկ ռեսուրսների հանդէպ: Բանն այն է, որ «այլընտրանքային» ձեւակերպումը այստեղ շատ հետաքրքիր է: Ի վերջոյ, այլընտրանք կարող է լինել ոչ միայն ասենք արեւի էներգիան, քամու էներգիան, այլ էներգառեսուրսների հայթայթումը կամ էներգետիկ այլ հզօրութիւնների կառուցումը, այլ նաեւ ասենք որեւէ եւրոպական խողովակաշարի նախագիծ Հայաստանով անցկացնելու տարբերակը:

Ձի բացառում, որ Ֆրանսիան ստանձնել է Եւրոպայում Հայաստանի օգտին այդ հարցում լրբբիւնդ անելու տարբերակ, բայց ոչ աւանդական՝ «Ղարաբաղի հարցը թող լուծուի, նոր միայն...» տարբերակով: Այսինքն, չի բացառում, որ Ֆրանսիան Եւրոպայում կը փորձի լրբբիւնդ անել այն գաղափարը, որ Հայաստանը պէտք է տարածաշրջանային էներգետիկ նախագծերում առարկայօրէն ներգրուել անկախ Ղարաբաղի հարցի լուծման գործընթացից:

Թէ ինչու Հայաստանն աւելի բաց տեքստով չի խօսում եւ իր պահանջը կամ մտայղացումը ներկայացնում Եւրոպային, թերեւս ունի երկու պատճառ: Հայաստանը գուցէ մտավախութիւն ունի բաց տեքստի դէպքում Ռուսաստանի բացառապէս խանդի եւ կոշտ արձագանքի կապակցութեամբ, ու մէկ էլ երեւի թէ Եւրոպական քաղաքական միջավայրում այդ գաղափարը կամ մտադրութիւնը ընկալելու անհրաժեշտ հողի բացակայութեան պատճառով, ինչի բացն էլ գուցէ յանձն է առել լրացնել Ֆրանսիան, որ ակնյայտօրէն ձգտում է մեծացնել իր դերը տարածաշրջանային հարցերում:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՏԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՅԱԿ ՌՈՒԹՅԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՅԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social  
 Democratic Hunchakian Party  
 of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$120.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in  
 US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԱԻԹ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ,-  
«ՊԱՏՐԱՍ ԵՆՔ ԵՐԿԻՍՈՒԹԵԱՆ, ԲԱՅՑ  
ՊԱՏՐԱՍ ՉԵՆՔ ԽՆԴՐԵԼՈՒ»

Հայ ազգային կոնգրեսի հետ իշխանական կողմից իրականացված հետապնդումները և կոտորածները հարգելի են և պատճառահարմար է դրուել այսպես՝ պատրաստ է միևս կողմը շարունակելու երկխոսությունը»,- նկատեց նա:

Դալիթ Յարութիանը նշեց, որ կողմնակից աշխատանքային խումբը չի էլ առարկել իր փաստաթուղթը՝ ներկայացնելով՝ գրկելով իրեն հնարավորություն ունի «ներկայացնելու իր հիմնադրամները ժողովրդին»:

Դալիթ Յարութիանը նշեց, որ կողմնակից աշխատանքային խումբը չի էլ առարկել իր փաստաթուղթը՝ ներկայացնելով՝ գրկելով իրեն հնարավորություն ունի «ներկայացնելու իր հիմնադրամները ժողովրդին»:

Ըստ նրա՝ երկխոսությունն ինքնանպատակ է. պետք է ունենայ մեկ կարեւոր ինդիկս՝ երկիրն առաջ տանելու, օգնելու, որ երկիրը դառնայ առաջընթաց երկիր՝ ժողովրդավարական, յաղթահարելու երկրի առջև յառնած մարտահրավերները:

Իսկ ՀԱԿ-ի կողմից երկխոսությունը կասեցնելու պատճառը, ըստ նրա, այն է, որ «երկխոսությունն սեղանի շուրջ նստած մեր գործընկերները փորձեցին դա օգտագործել զուտ քաղաքական նպատակներով՝ փորձելով որոշակի քաղաքական դիրքի դեմքերը շահել, ընդլայնել ընտրազանգուածը»:

«ՀԱԿ-ը շեղվել է երկխոսությունից և փորձում է երկիրն, ես երկխոսությունը շատ լուրջ եմ վերաբերում: Քաղաքակիրթ երկրում երկխոսությունն է միակ միջոցը մարդկանց, քաղաքական ուժերի միջև շփման: Ես չեմ ասի, թե դա պետք է հենց ՀԱԿ-ին կամ հենց իշխանությունը. դա պետք է երկրին», - ընդգծեց Դալիթ Յարութիանը:

«ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՍԱԿԱԲԱԹԻ ՆՈՒԱԾՈՒՄՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է»

Եթե Հայաստանում կան ձեռառնող ինստիտուտներ, ապա դրանցից մեկը լրատվամիջոցներն են: Նման կարծիք է յայտնել «Հրապարակ» թերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանեանը, Հոկտեմբերի 10-ին, «Լրատվամիջոցները եւ դրանց ազդեցությունը հասարակական-քաղաքական գործընթացների վրայ» թեմայով կայացած քննարկման ժամանակ: Քննարկումները կազմակերպել են Մամուլի ազգային մամուլի եւ ԱՄՆ Ազգային դեմոկրատական ինստիտուտի կողմից:



«Հրապարակ» թերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանեան

Նրա ներկայացմամբ, խօսքի ազատությունը Հայաստանի սակավաթիվ ձեռքբերումներից մեկն է, եւ յաջողությունը ձեռք է բերվել անձնագործ մարդկանց ուժերով, ովքեր աշխատել են՝ չնայած ֆինանսական խնդիրներին եւ ճնշումներին: «Ոչ գործադիր, ոչ օրհնագիր իշխանությունները չեն օժանդակել Հրատվամիջոցների ինստիտուտի կայացմանը, այլ միայն խանգարել են», - նշել է Արմինե Օհանեանը՝ յառաջելով, որ օրհնագրությունն մեջ մտցնած դրոշմները՝ կապույտ գրպարտությունն եւ վիրավորանքի ապաքրեականացման հետ, առաջին անպաշտպան են դարձրել լրատվամիջոցներին: Նրա խօսքով, ձեռակերպումներն այնքան լրջոգուած են, որ դժուար է կանխատեսել, թե որ հրապարակումը կարող է դա-

տական միջամտություն առիթ հանդիսանալ:

Բացի այդ, Օհանեանը կարծում է, որ Հայաստանում ձեռառնողները է սովորոյթ, երբ պետական պաշտօնեաները փորձում են կոծկել տեղեկությունը: Իսկ տեղեկությունն անբաւարարությունը հանգեցնում է յօրինուած քննարկ առաջացման, քանի որ լրագրողները հնարաւորութիւն չեն ունենում ստուգել տեղեկութիւնը: Ինչ վերաբերում է լրագրողների ոչ պրոֆեսիոնալ մօտեցումների վերաբերալ հնչող տեսակէտներին, ապա Արմինե Օհանեանը խորհուրդ է տալիս պետական աշխատողներին մտածել սեփական պրոֆեսիոնալիզմի մասին:

ԿՈՒԼԻՑԻԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆՆ Է

Հայաստանի իշխող կողմից իրականացված խտրական քաղաքական քննարկումները լինելու է գործող նախագահ Սերժ Սարգսյանը: Հոկտեմբերի 10-ին, լրագրողների հետ զրույցում նման համոզմունք է յայտնել Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցության պատգամավոր Մկրտիչ Մինասեանը: «Մեր թեկնածուն կողմնակից յուզազրով վստահ ասում եմ՝ լինելու է Սերժ Սարգսյանը եւ օրհնաքի սահմաններում ամէն ինչ անելու ենք, որ ժողովուրդը ձայներ տայ մեր թեկնածուին», - նշել է Մինասեանը, ով կարծում է, որ իրենց թեկնածուին կ'աջակցեն նաեւ կողմնակից միևս ուժերը՝ ՕԵԿ-ն ու ԲՀԿ-ն. «Կայ համաձայնագիր: Համոզուած եմ, որ դա այդպէս էլ կը լինի»:



Պատգամավոր Մկրտիչ Մինասեան

Հարցին, հնարաւոր է արդեօք համագործակցութիւն Լեւոն

Տէր-Պետրոսեանի կամ Ռոբերդ Քոչարեանի հետ, յատկապէս, երբ կարծիք կայ, որ Սերժ Սարգսյանը կարող է կանգնել նման երկընտրանքի առջև, Մկրտիչ Մինասեանը պատասխանեց, որ չի բացառում համագործակցութիւնը Ռոբերդ Քոչարեանի հետ: «Ընտրութիւնները յետոյ հնարաւոր են որոշ ձեռաչափեր: Քաղաքական ուժերից մէկը եթէ որոշակի ձայներ ստանայ, եւ եթէ այդ ուժը ներկայացուի պարոն Քոչարեանի անձով, միգուցէ համագործակցութեան օրինակ նշելով նոր կողմնակից ստեղծման հնարաւորութիւնը:

ՄԱՐՏԻ 1-Ի ԶՈՐԵՐԻ ԾՆՈՂՆԵՐՆ ԱՅԼԵԻՍ ՉԵՆ  
ՎԱՏԱՅՈՒՄ ԵՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԻՆ



Մարտի 1-ի զոհերի ծնողները բողոքի ակցիա են անցկացնում ԵՊ-ի հայաստանեան գրասենեակի առջև

Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում հայաստանեան պատուիրակության ղեկավար Դալիթ Յարութիանը կարծում է, որ 2008 թվականի Մարտի 1-ի 10 սպանությունների գործով նախատեսուած գեկոյցի հրապարակումից յետոյ նախաքննութիւնը պէտք է շարունակուի:

Յիշեցնենք, որ անցեալ շաբաթ Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդունել էր բանաձեւ, ըստ որի, անհրաժեշտ է, որ նախաքննական մարմինը վերջնական կամ առնուազն միջանկեալ գեկոյց հրապարակի մինչեւ 2011 թվականի վերջը: Փաստահաւաք խմբի նախկին անդամ, փաստաբան Սեդա Սաֆարեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրույցում տարակուսանք յայտնեց, թէ ի՞նչ գեկոյց պիտի հրապարակի նախաքննական մարմինը: Ըստ փաստաբանի՝ դա նախաքննական մարմնի գործը չէ, օրէնքով նրան նման լրագորութիւն վերապահուած է: Սաֆարեանն ասաց՝ նախաքննական մարմինը գեկոյց գրելու փոխարէն պիտի

«Կարծում եմ՝ դրանք միմեանց հետ փոխկապակցուած երեւոյթներ չեն: Զեկոյցը հրապարակուել է, որպէսզի հանրութիւնը տեղեկ լինի, թէ ինչ քայլեր է ձեռնարկել նախաքննական մարմինը, որն է՝ այն խնդիրները, որոնց բախուել է նախաքննական մարմինը՝ հաշուի առնելով, որ անցել է տեւական ժամանակ եւ էական առաջընթաց չկայ»:

մեղադրական եզրակացութիւն ուղարկի դատարան:

Մարտի 1-ին սպանուած Գոռ Քլեանի հայրը՝ Սարգիս Քլեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրույցում համոզմունք յայտնեց, թէ նախաքննական մարմնի գեկոյցի հրապարակման գաղափարը ձեռակախութիւն ապահովելու նպատակ է հետապնդուել: Նրա խօսքով՝ եթէ իշխանութիւնը թոյլ տար, նախաքննական մարմինը վաղուց բացայայտած կը լինէր

Մարտի 1-ի սպանութիւնները եւ ոեւէ մէկի մտքով չէր անցնի գեկոյց հրապարակել՝ յատկապէս այն դէպքում, երբ մօտ վեց ամիս է անցել Մարտի 1-ի բացայայտմանը նոր թափ հաղորդելու կապակցութեամբ Սերժ Սարգսյանի ցուցումից:

«Սերժ Սարգսյանը ձեռակախ նոր թափ հաղորդեց, յետոյ էլ ասաց՝ յանկարծ չբացայայտէ՛ք: Իրենք են սպանել մեր երեխաներին, իրենք իրենց չեն դատելու», - ասաց Քլեանը:



# ԼՈՒՐԵՐ

## ՊՐԱՏՔԷ.-

### «ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՈՐՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԻՄՆՈՒԾ ԸԼԼԱՅ ԿԵՑ ՏԱՐԵՐՈՒ ԿՐԱՅ»

ԵԱՀԿ Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Ռոպերթ Պրատքեյ ԵՆԽՎ աշնանային նստաշրջանի նիստի ժամանակ իր ելույթի ընթացքին յայտարարած է, որ ԼՂ հակամարտությունը կարգաւորելու ժամանակ Հայաստան եւ Ատրպեյճան պէտք է ուժ կիրառեն:



Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Ռոպերթ Պրատքեյ

Ինչպէս կը հաղորդեն ատրպեյճանական լրատուամիջոցները, Պրատքեյ ընդգծած է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահները հնարաւոր բոլոր ջանքերը կը գործադրեն՝ տարածաշրջանին մէջ խաղաղութեան հաստատման համար: Անոր խօսքով՝ համանախագահող երկիրները (ԱՄՆ, Ֆրանսա, Ռուսաստան) ԼՂ հակամարտութեան լուծումը կը տեսնեն երեք սկզբունքներու՝ ուժի չկիրառման, տարածաքային ամբողջականութեան եւ ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքի ծիրին մէջ:

ԼՂ իրաւական կարգավիճակի վերջնական որոշում, փախստականներու եւ հարկադիր վերաբնակներու վերադարձ հայրենի հողեր, տարածաշրջանին մէջ խաղաղապահ գործողութիւններու իրականացում եւ անվտանգութեան միջազգային երաշխիքներ:

Ըստ կայքի հաղորդման՝ Պրատքեյ ըսած է, որ դարբանացի հակամարտութեան կարգաւորումը պէտք է հիմնուած ըլլայ վեց տարրերու վրայ. ԼՂ յարակից շրջաններէն հայկական զօրքերու դուրս բերում, Լեռնային Ղարաբաղին անցումային կարգավիճակի շնորհում, Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ ուղիղ կապի ապահովում,

Իսկ ԵԱՀԿ Մինսկի խումբի ռուս համանախագահ Իկոր Պոպով ըսած է, որ հակամարտութիւնը լուծել հնարաւոր է միայն դիւանադիտութեամբ: Ան աւելցուցած է, որ խաղաղութեան հնարաւոր պիտի ըլլայ հասնիլ միայն այն պարագային, եթէ երկու կողմերը քաղաքական կամք ունենան:

## ԼԵՆԱՐԿԵՐ.

### «2008-ԻՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՊԱՏՐԱՍ ԷՐ ԼՈՒԾԵԼ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴԻՐԸ»

ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախկին նախագահ Գորան Լենմարկերը յայտարարել է, որ 2008-ին սկսուած հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը պատրաստ էր լուծել Լեռնային Ղարաբաղի խնդիրը:



ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախկին նախագահ Գորան Լենմարկեր

«Սակայն հայկական սփիւռքը խոչընդոտեց: Եթէ հայ-թուրքական սահմանը բացուեր, այն դրականօրէն կ'անդրադառնար ԼՂ-ի խնդրի կարգաւորմանը, ադրբեջանական «ԱՊԱ» գործակալութեան փոխանցմամբ՝ ասել Լենմարկերը, հայկական զօրքերը պէտք է հեռանան Լեռնային Ղարաբաղի յարակից տարածքներից, պէտք է միջանցք ստեղծել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ, այնուհետեւ փախստականները պէտք է վերադառնան իրենց հողեր, Ադրբեջան պէտք է վերադառնան հայ փախստականները, իսկ վերջում

## ՇԱՌԼ ԱԶՆԱԴՈՒՐԻ ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

### Շարունակուած էջ 1-էն

քը, «Լէ Նիւվէլ Տ'Արմէնիին» ըսած է. - «Շարունակելով այսպէս՝ մենք երբեք մեր նպատակին չենք հասնիր: Մեր հակառակորդները իրենց փրկութեան համար կը սպասեն մէկ բանի միայն՝ որ անոնք, որոնք դեռ ունին այդ դէպքերու յիշողութիւնը, մահանան: Ո՞ր երկիրն է, որ պաշտպանած է մեզ: Ֆրանսան ճանչցած է այն, ինչ ճանչցած է, բայց ան աւելի հեռու չերթար, եւ ոչ մէկ

երկիր չի պաշտպաներ մեզ»: Ապա Ազնաւուրը հարց տուած է. - «Ի՞նչ բառ կ'օգտագործուէր ցեղասպանութիւն բառի յորինումէն առաջ՝ հայերու կոտորածներ, օգտագործենք կոտորածներ բառը ուրեմն: Եթէ թուրքերը չեն ուզեր ընդունիլ ցեղասպանութիւնը, ապա թող ընդունին գոնէ հայերու կոտորածները: Արդէն մեծ քայլ առած կ'ըլլանք, եթէ կարողանանք ատոր հասնել»

Ազնաւուրի հարցազրոյցը տեսնել մեր ներքին էջերուն վրայ:

## «ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՆԻ ՈՉ ԹԷ 50, ԱՅԼ 100 ՀԱԶԱՐԱՆՈՑ ԲԱՆԱԿ»

Հայկական բանակի թուաքանակը ներկայացուածից երկու անգամ աւելի է եւ 34%-ով գերազանցում է ադրբեջանականին: Այս մասին, ինչպէս տեղեկացնում են ադրբեջանական լրատուամիջոցները, Բաքուում ՎՈւԱՄ Խորհրդարանական վեհաժողովի եւ Բալթեան ասամբլիայի համատեղ կոնֆերանսի ժամանակ ասել է Ադրբեջանի արտգործնախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ, անվտանգութեան հարցերով վարչութեան 2-րդ քարտուղար Էլչին Գուսէյնլին:

Ընդգծելով, որ Ադրբեջանն ունի 70 հազարանոց բանակ, Գուսէյնլին ասել է. «Հայաստանի բանակի թուաքանակը կազմում է 48884: Բացի այդ, Հայաստանը Լեռնային Ղարաբաղում ունի 45 հազարանոց բանակ: Այդպիսով, հայկական բանակի ընդհանուր թուաքանակը 93884 է, որը 34%-ով գերազանցում է ադրբեջանականին»:

## ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿԸ ԿԵՐԱԲԱՑՈՒՄԻ ՍԵՐՁԱԴՈՐ ԱՐԵԻԵԼՔԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Աւարտուել են Տիարպեքիւրում գտնուող Սուրբ Կիրակոս եկեղեցու վերանորոգման աշխատանքները եւ Հոկտեմբերի 22-ին մատուցուելիք պատարագով Սուրբ Կիրակոսը կը վերաբացուի եւ կը գործի որպէս եկեղեցի:



Տիարպեքիւրում գտնուող Սուրբ Կիրակոս եկեղեցին

Ինչպէս տեղեկացնում է թուրքական «Դողան» գործակալութիւնը, Սուրբ Կիրակոսը Մերձաւոր Արեւելքում ամենամեծ հայկական եկեղեցին է, որը վերջին 30 տարիների ընթացքում չի գործել: Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանացիները եկեղեցին օգտագործել են որպէս շտաբ, աւելի ուշ այն վերածուել է պահեստի:

Նաեւ մէկ այլ կարեւորութիւն ունի. ի տարբերութիւն Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու՝ այն մեր սեփականութիւնն է», - ասել է Պոլսոյ հայոց պատրիարքական փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը՝ նշելով, որ պատարագի արարողութեանը սպասում է աշխարհի տարբեր երկրներից մեծ թիւով հայերի մասնակցութիւն:

Սուրբ Կիրակոս եկեղեցու վերանորոգման աշխատանքների համար ծախսուել է 3,4 միլիոն դոլար: Ծախսերի 70%-ը հոգացել է Պոլսոյ հայ համայնքը, իսկ 30%-ը՝ Տիարպեքիւրի քաղաքապետարանը:

«Այս եկեղեցին մեզ համար

## ՆԻՔՈԼԱ ՍԱՐՔՈՋԻ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ

### Շարունակուած էջ 1-էն

մը ընդունելի է: Բայց եթէ թուրք-իոյ նման մեծ երկիրը ճանչնար իր պատմութեան սեւ օրերը եւ, իհարկէ, ցեղասպանութիւնը, ապա Ֆրանսան եւ Հայաստանը այդ կը նկատեն հաշտութեան ուղղուած քայլ:

Ժամանակը անսահման չէ՝ 1915-էն մինչեւ այսօր՝ 2011 թուականը բաւական ժամանակ անցած է խորհրդածելու համար: «Ես ժամկէտային սահմանափակում չեմ մատնանշէր, որովհետեւ յոյս ունիմ, որ թուրք հասարակութիւնն ու ղեկավարութիւնը ճիշդ կ'արձագանքէ: Ամէն պարագայի, ես կը կարծեմ, որ այս ամէնը տեղի կ'ունենայ իմ մանդատի ժամանակ», - ըսաւ Ֆրանսայի նախագահը:

«Մնացոն հաշտութիւն չի կրնար ըլլալ՝ ժխտելով միւսի տառապանքները, մնացուն հաշտութիւն չի կրնար ըլլալ՝ պատմական փաստերու ժխտման հիման վրայ: Եթէ թուրք-իոյ նման մեծ երկիրը իր մէջ ուժ գտնէր այս քայլին դիմելու համար, ապա Ֆրանսայի համար այդ բաւարար կը դառնար, քանի որ օրէնքի ուժով Ֆրանսան կը ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը: Իսկ եթէ թուրք-իան այդ քայլին չդիմէ եւ շարունակի ժխտել Ցեղասպանութիւնը, ապա Ֆրանսան այդ ժամանակ կը ցանկանայ աւելի հեռուն երթալ եւ փոխելով իր օրէնսդրութիւնը՝ Հայոց Ցեղասպանութեան ժխտման համար քրէական պատիժ կը սահմանէ», - ըսաւ Ֆրանսայի նախագահը:

Ասուլիսի ժամանակ երկու երկիրներու ղեկավարները անդրադարձան նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման, հայկական աթոմակայանի գործարկման, տնտեսական յարաբերութիւններու զարգացման եւ այլ հարցերու:

Նիքոլա Սարքոզի յայտնեց, որ

Ասուլիսին յետոյ երկու երկիրներու նախագահները, աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնաւուրի մասնակցութեամբ, ներկայ գտնուեցան Շառլ Ազնաւուրի տուն-թանգարանի բացման:

Թանգարանի կառուցման վրայ Հայաստանի պետական պիւտճէէն ծախսուած է մօտ 1 միլիոն դրամ:

# ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

**ՓԱՍՏՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՂԻ ԸԱՄԱՐ)**

## ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

**1060 N. ALLEN AVE. PASADENA**  
**ՍԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱՁԱՅՆԵԼ**  
**(626) 797-7680**







## ՇԱԲԱԿԱՆ ԳԵՂԱՍԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՎՈՐՈՒՄ «ԻՆՉ ԶԱՄԱՐ ՄԻԵԻՆՈՅՆ Է, ՑԵՂԱՍԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԹԵ ԱՅԼ ԲԱՌ»

-Nouvel d'Armenie - «Vivement dimanche»-ի ժամանակ արուած Չեր յայտարարութիւններով Դուք միայն ընկերներ ձեռք չբերեցիք:

**-Շառլ Ազնաւուր - Ես սկսում եմ ձանձրանալ դրանից: Մենք յաջողութեան չենք հասնի, մենք երբեք յաջողութեան չենք հասնի: Մեր հակառակորդները մեզանից սպասում են, որ նրանք, ովքեր դեռ չի յաջողութիւն ունեն, մեռնեն, որ պէտք է դրանից պրծնեն: Ո՞ր երկիրն է աջակցել մեզ: Ոչ մէկը: Ֆրանսան ճանաչել է այն, ինչ ճանաչել է, բայց նա աւելի հեռուն չի գնաց: Ոչ մի երկիր չի գալ դէպի մեզ: Երբէք:**

Աւելին, չեղափոխութիւն անող արաբները երազում են քեմալական մոտեցիլ հիման վրայ կառավարութիւն ստեղծել: Սա ջուր է լցնում թուրքերի ջրաղացին, որոնք հարստանում են եւ զբաղեցնում էլ աւելի մեծ տեղ: Նրանք արդէն «Մեծ քսանակի» անդամ են: Նրանք անգամ չեն անհանգստանում Եւրամիութիւն մուտք գործելու մասին: Իսկ ո՞ւր են գնում մենք: Այս ընթացքում Հայաստանը տառապում է, ամէն օր Հայաստանը դատարկում է: Քիչ ժամանակ անց այն կը դառնայ մի դատարկ խիտուն: Ո՞ւմ է դա ձեռնտու: Երեք մաֆիոզի: Եւ հարիւր միլիոնաւոր աղքատ մարդիկ կը սփռուեն աշխարհով մէկ:

Այս բոլոր իրողութիւններն ինձ անհանգստացնում են: Իսկ մենք մնում ենք կենտրոնացած ցեղասպանութիւն բառի վրայ, որը թուրքերը շահարկում են: Արդ, ուրեմն, ես հարց եմ տալիս թուրքերին. «Եթէ դա ցեղասպանութիւն չէ, ապա ինչպէ՞ս կոչել մի ժողովրդի բնաջնջումը: Ինչպէ՞ս էք դուք այն անուանել ժամանակին: Ինչպէ՞ս էր Աթաթուրքն ինքը որակել այդ իրավիճակը: Դա եմ ես ուզում: Ինչպէ՞ս դա կը կոչուէր մինչեւ «ցեղասպանութիւն» բառը հնարելը: Կոտորած: Հայերի կոտորած: Եթէ դուք չէք ուզում օգտագործել «ցեղասպանութիւն» բառը, գոնէ խոստովանէք, որ դա կոտորած է եղել: Եթէ մենք դրան հասնենք, մենք մեծ յաջողութիւն կ'ունենանք»:

Հայաստանը մեծ վտանգի մէջ է, եւ բոլորը յապաղում են ցեղասպանութիւն բառի վրայ: Ես չեմ տեսնում, թէ դա ինչպէս է նպաստում երկրի առաջընթացին: Ո՞ւր է տանում մեզ այդ տրամաբանութիւնը: Մարդիկ, ովքեր քննադատում են ինձ նման կարծիք յայտնելու համար, ո՞ւր են նրանք: Ի՞նչ են նրանք անում Հայաստանին օգնելու համար: Ո՞ր պահին են նրանք գումար ուղարկում: Եւ նրանք ինձ դա՞ս պիտի տան: Այդ ես եմ առաջինը նրանց դաս տուել: Ես այս մասին խօսել եմ ԱՄՆ-ից մի հայ փաստաբանի հետ, որի գրասենեակում առնուազն 300 իրաւաբան է աշխատում: Նա միւսներին պէս էր մտածում: Բայց երբ ես նրան բացատրեցի իմ տեսակէտը, նա ինձ ճիշտ համարեց:

Ես քաղաքական գործիչ չեմ: Ես դրանից ոչինչ չեմ հասկանում: Ես միայն մի բան գիտեմ, մենք մի կտոր փոքր ու դժբախտ երկիր ունենք, որն արդէն երկրորդ անգամ զրեթէ մեռնում է: Եւ մենք այլ բանի մասին ենք խօսում:

Nouvel d'Armenie - Մինչդեռ Դուք ցեղասպանութեան խնդրի շուրջ

Այս ցնցող հարցազոյցում երգիչը կոտրում է բոլոր տաբուները, այդ թուում եւ «ցեղասպանութիւն» եզրոյթի շուրջ բառերի պատերազմը, որը կարող էր սառեցնել յարաբերութիւնները Թուրքիայի հետ եւ կարող էր վնասել Հայաստանի շահերին: Արտայայտուած ցնցող խօսքերը մէկ անգամ եւս ընդգծում են այն, ինչ նա արդէն ասել էր «Vivement Dimanche» («Վիվըման դիմանձ») հաղորդման Սեպտեմբերի 4-ի թողարկման ժամանակ: Բայց նաեւ մի ձող է՝ պարզուած թրքական իշխանութիւններին: Կը գտնուի՝ մէկը, ով կը բռնի այդ ձողը:

«Vivement Dimanche» հաղորդման Սեպտեմբերի 4-ի թողարկման ժամանակ հաղորդավար Միշէլ Դրիւկերի՝ ցեղասպանութեան մասին հարցին Շառլ Ազնաւուրը պատասխանել է. «Դա խանգարող բառ է, այն նաեւ ինձ է խանգարում, այն, ինչ հիմա կ'ասեմ, կարող է ինձ մէջքով դարձնել որոշ հայերի նկատմամբ, բայց ես կարծում եմ՝ դա կարելու չէ: Եթէ իսկապէս թուրքերը ազնուութիւն ունեն ասելու, որ իրենց խանգարողը «ցեղասպանութիւն» բառն է, մենք այլ բառ կը գտնենք, միայն թէ սահմանները բացուեն, եւ թրքական կառավարութիւնը մտածի մեզ հետ երկխօսութիւն սկսելու մասին»: Լրագրողի այն նկատաւնումը, թէ, «1.5 մլն-ը պատկանելի թիւ է փոքրիկ երկրի համար», Ազնաւուրը պատասխանել է. «2 թէ 1.5 մլն» նոյնն է: Երբ սպանում են 2 երեխայ կամ 1.5 մլն հայ կամ 6 մլն հրեայ, նոյնն է: Սպանել են, ցանկացել են սպանել, դա է կարելու»:

Nouvel d'Armenie

շատ ակտիւ էք եղել, յատկապէս երբ հարցը Սեմատում էր քննարկուում: Դուք եկաք՝ խօսելու Սեմատի առջեւ.

**Շ. Ա. - Եւ դա ինչ տուեց:**  
Nouvel d'Armenie- Դուք մասնակցել էք միտինգների.

**Շ. Ա. - Եւ դա ինչի՞նչ է ծառայել:**

Nouvel d'Armenie - Դուք սիւնակներ էք տպագրել թերթերում.

**Շ. Ա. - Եւ դա ինչի՞նչ է ծառայել:** Դա մեզ ո՞ւր է տարել: Ի՞նչ աւել բան է դա մեզ տուել: Եթէ հաշուենք մետրերով՝ սկսած մի Ք կէտից, քանի՞ միլիմետր ենք առաջ գնացել: Զրո:

Nouvel d'Armenie - Դուք իսկապէս տպաւորութիւն ունէք, որ մենք առաջ չե՞նք շարժուել:

**Շ. Ա. - Չենք շարժուել եւ չենք շարժուի:** Երբէք: Ինձ պարբերաբար հրաւիրում են Թուրքիա: Թուրքիայի արտգործնախարարն անգամ ինձ հրաւիրել է արձակուրդ անցկացնելու իր մօտ: Որպէսզի համաձայնութեան գանք, թէ ինչ ենք պահանջելու: Բայց քաղաքական պարտիաներ չխաղանք, մէկի կամ միւսի պարտիզանական հետաքրքրութիւնների համար: Ինձ հետաքրքիր չէ, թէ ով կը լինի Հայաստանի յաջորդ նախագահը: Ես ուզում եմ, որ սահմանը բացուի, եւ այս երկիրը մի փոքր շունչ քաշի:

Nouvel d'Armenie - Դուք շիշ էք նետում ծովի մէջ:

**Շ. Ա. - Այո, ես միշտ լաւ բաներ եմ ատմել թուրքերի մասին:** Ես կարծում եմ, որ հետաքրքիր ազգ են: Թուրքիայում չկայ մի հայ, որ ասի, որ չի սիրում թուրքերին: Չեն սիրում, հաւանաբար, նրանց պահուածքը, նրանց քաղաքականութիւնը, բայց ոչ ժողովուրդն ինքին: Իմ նպատակն է, որ մի փոքր առաջ գնանք:

Nouvel d'Armenie - Դուք հիասթափուած չե՞ք 2009-ին Ցիւրիխում ստորագրուած արձանագրութիւնների ձայնորդումից:

**Շ. Ա. - Դրանք երեկոյեան ստորագրուեցին, բայց յաջորդ օրն իսկ արժեզրկուեցին:** Ես հիասթափուած չեմ, որովհետեւ կասկածում էի, որ այդպէս էլ կը լինի: Ինչո՞ւ: Թուրքերի հետ ոչ մի պայմանագիր այդպէս էլ չի հաստատուել: Միշտ ինչ-որ պահ է գալիս, երբ կամ նրանք են նահանջում, կամ մենք ոչինչ չենք կարողանում անել: Այս միտմանն այսօր նպաստում է նրանց ռազմավարական դիրքը: Նրանք իրենց ուժեղ



**Շ. Ա. - Այո, այդպէս է: Ոչինչ չենք անում այնտեղ ապրող մարդկանց օգնելու համար: Հակառակը: Ես մաֆիոզների մասին անտանելի պատմութիւններ գիտեմ: Նրանք խժուում են գիւղացիներին իրենց հողերի վրայ: Մաֆիայի այդ անդամներին պէտք է զնալակահարել: Այդպէս այլեւս չի կարող շարունակուել: Ցանկանում եք անդամակցել մաֆիային: Գնացէք ձեր մաֆիան ուրիշ երկրներում հիմնէք: Շատերը ձեզ կ'ընդունեն: Բայց դա ձեր երկրում մի արէք, սեփական ժողովրդի դէմ մի արէք, Աստուծոյ սիրուն:**

Nouvel d'Armenie - Բայց հայկական հարցի կապակցութեամբ ո՞րն է Ձեր առաջնութիւնը:

**Շ. Ա. - Ես համաձայնութիւն եմ ուզում:** Ես ուզում եմ, որ թուրքերը ճանաչեն այն, ինչ տեղի է ունեցել: Ինձ համար միւսնոյն է, ցեղասպանութիւն, թէ այլ բառ: Ի՞նչ կը տայ ինձ նրանց կողմից այդ բառի օգտագործումը:

Ուզում եմ, որ նրանք ճանաչեն ջարդերը: Ժամանակին այդ էին ասում: Ամբողջ աշխարհը խօսել է կոտորածների մասին: Եւ յետոյ յանկարծ, յիսունականներից սկսած, սեւեռուեցին այդ ցեղասպանութիւն բառի վրայ, որը շատ ծանր է ընդունել, եթէ անգամ համապատասխանում է իրականութեանը:

Nouvel d'Armenie - Ամէն դէպքում:

**Շ. Ա. - Նրանք չեն ուզում ընդունել այն փաստը, որ որոշում էին կայացրել աշխարհի երեսից վերացնել մի ժողովուրդ: Եւ ուրեմն պէտք է մոռանալ, թէ ինչ է տեղի ունեցել: Բայց պէտք է գնալ դէպի յոյսը:**

Սահմանի թուրքերը հայերին դէմ չեն: Տիրապետիքի քաղաքացեալ բացառապէս կերպով ասել է, որ այդ ճանաչումը պէտք է տեղի ունենայ: Նշանաւոր մարդիկ կան, որ հետաքրքիր բաներ են ասում: Բայց, անշուշտ, կան նաեւ հակառակն ասողներ: Բայց թուրք ժողովուրդը շարժում է: Նա շարժուեց Հրանտ Տինքի յուղարկավորութեան համար:

Nouvel d'Armenie - Իսկ Ղարաբաղի առումով ինչպէ՞ս էք տեսնում իրերի դրութիւնը: Մանաւանդ որ վտանգ կայ թէ այս կողմից եւ թե՛ Թուրքիայի: Ի՞նչ խորհուրդ կտայիք Դուք:

**Շ. Ա. - Սա համալիր ծրագրի մաս է: Դա նորմալ է: Պէտք է առնուազն յստակ լինել. արդեօք Ղարաբաղը պատկանո՞ւմ էր Ասորպէ՛յանին մինչեւ Ստալինի կողմից այն նրանց նուիրելը: Արդեօք Ղարաբաղը, այնուամենայնիւ, Հայաստան է: Ոչ, այն ինքնիշխան երկիր է: Դա այդպէ՞ս է, թէ՞ ոչ:**

Nouvel d'Armenie - Այսինքն, այստե՞ղ էլ պէտք է հրաժարուել յե-



### ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵԶ



Այս օրերուն Գալիֆորնիա կը գտնուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.: Իր այս այցելութեան առիթով Լոս Անճելըսի մօտ Լիբանանի հիւպատոս Տիկ. Մատնա Աուն ճաշկերոյթով մը պատուեց Արամ Ա. Վեհափառը: Ծաշկերոյթին ներկայ էին Լոս Անճելըսի Հայաստանի աւագ հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան, ինչպէս նաեւ քաղաքական եւ կրօնական այլ կազմակերպութեան ներկայացուցիչներ: Արամ Վեհափառ այս առիթով ելոյթ ունենալով շնորհակալութիւն յայտնեց կազմակերպուած

ընդունելութեան համար: Այնուհետեւ խօսելով Լիբանանի այժմու իրավիճակի մասին շեշտեց կարեւորութիւնը 18 տարբեր համայնքներու միջեւ համախոհ համագործակցութեան, որուն ջերմ ջատագովն է Լիբանանի հայութիւնը: Ան վերահաստատեց Լիբանանի գերիշխանութեան պահպանման կարեւորութիւնն ու անոր հայութեան յանձնառութիւնը: Ապա Ա. Կաթողիկոս իր գոհունակութիւնը յայտնեց որ ԱՄՆ հաստատուած հայեր նախանձախնդիր են Լիբանանի ապահովութեան, անկախութեան ու բարօրութեան:

### ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՆ ՊԻՏԻ ՍԿՍԻ ԻՐ 65ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Նոյեմբեր 6ին, 2011 պիտի սկսի իր տարի մը տեւող 65րդ տարեդարձի տօնախմբութիւններուն: Պատմական այս կարեւոր հանգրուանին, եկեղեցւոյ հանգուցեալ հիմնադիրները յատուկ կերպով պիտի յիշուին եւ այդ օր Սուրբ Պատարագի աւարտին Հոգեհանգստեան Պաշտօն պիտի կատարուի անոնց հոգիներուն համար: Իսկ հիմնադիրներուն անմիջական հարազատները Սուրբ Պատարագի աւարտին տեղի ունեցած ճաշկերոյթի ընթացքին պիտի արժանանան պաշտօնական վկայագիրներու՝ ի յիշատակ իրենց հանգուցեալ սիրելիներուն:



Ճաշը պիտի սպասարկուի Եկեղեցւոյ վերանորոգուած Կիրակոս Սրահին մէջ: Օրուան հանդիսավարը պիտի ըլլայ Իրաւաբան Մարք Կիրակոս, որ այս եկեղեցւոյ Կիրակոսեան վարժարանէն շրջանաւարտ եղած է եւ ծառայած է նաեւ Ծուխի Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան միջոցաւ:

Ուսումը ստանալէ ետք արժանացաւ Քահանայական Ձեռնադրութեան եւ Օծման:

Յատուկ նշանակութիւն պիտի ունենայ հաւատացեալներուն համար, երբ այդ օր Սուրբ Պատարագը պիտի մատուցանէ Արժ. Տ. Գէորգ Աւագ Քհնյ. Առաքելեան, որ մեծցած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ համայնքին ներս: Աստուծոյ Խօսքին ներշնչուած, իր երիտասարդ տարիքին ան Եկեղեցւոյ մէջ ծառայեց որպէս Կիսասարկաւագ, ապա Նիւ Ռոշէլի, Նիւ Եորք, Սուրբ Ներսէս Ընծայարանի մէջ իր Աստուածաբանական

Մուխը լաւ պատճառ ունի տօնախմբելու իր տարեդարձը, որովհետեւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցին Սան Կէպրիլէ Հովիտի հնագոյն Հայ Առաքելական Եկեղեցին է, որ 1947ին ի վեր հոգեւոր եւ մշակութային սնունդ կը մատակարարէ հայ համայնքին:

Ձեռնարկի մասին յաւելեալ տեղեկութիւն ունենալու եւ ճաշի համար ձեր տեղերը ապահովելու համար կը խնդրուի հեռաձայնել Այլի Կրաշեանի (626) 446-1796 թիւով, կամ Ալիս Իսկէնտէրեանի (818) 606-6606 թիւով:

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ ԳԱԻԱՌԻ ՇԵՐԻՖ ԼԻ ՊԱՔԱՅԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ-ՀԱՇՄԱՆԴԱՍ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՅԱՂԹԱԿԱՆ 12ՐԴ ԹԵԼԵԹՈՆԸ



Հոկտեմբեր 9, 2011 փառաշուք կերպով տեղի ունեցաւ «Հայաստանի Ծնողագուրկ-Հայմանդամ Երեւաններ» աւանդոյթ դարձած 12րդ Թեյեթոնը մեծ խնայողութեամբ եւ յաջողութեամբ: Չնայած տեխնիկական, հեռախօսային, հեռաձայնային լուրջ դժուարութիւնների որի պատճառով առաջին 4 ժամը մեր նուիրաբերող ժողովուրդը չկարողացաւ միանալ եւ իր սրտաբուխ նուիրատուութիւնը կատարել որի համար մեր ժողովուրդի ներողամտութիւնն ենք խնդրում: Այդ պատճառով «Հայաստանի Ծնողագուրկ Երեւաններ» ի գործադիր մարմնի որոշմամբ 4 ժամեայ բացը գոցելու համար եւ աւելի օգտակար լինել Հայաստանի որբանոցների եւ մանկատներում իրենց ծնողների եւ հարազատներ սիրոյ գրկուած երեխաները, որոշեց այս Կիրակի Հոկտ. 18ին կազմակերպել 4 ժամեայ 2րդ Թեյեթոնը, առիթ տրամադրելով

մեր ազնիւ հասարակութեան, մասնակցելու եւ իր սրտաբուխ նուիրատուութիւններով օգտակար լինի Հայաստանի երեխաների վաղուայ գալիք օրերին: Հոկտեմբեր 18, 2011 Թեյեթոնի կը հեռարձակուի A.M.G.A. 380 կայանի երեկոյեան ժամը 8ից մինչեւ 12:30: Երկու Թեյեթոնների բոլոր մանրամասնութեան համար կարդացէք «Մասիս» թերթի յաջորդ համարում: Հայաստանի Ծնողագուրկ Երեւանների Գործադիր Մարմին  
Contribution Form: Armenian American Orphans Christmas Fund, Inc.  
P.O. Box 250038, Glendale, CA 91225  
Tel. 818.246-0125 818.606-2070  
forourkids99@gmail.com  
www.forourkids99.com  
Non-profit Organization  
A Tax-exempt 501 (c) 3 Charity

### «ԱՆՍՈՒԱՅ ԵՐԳԵՐ» (ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԳՉԱՆՈՒՄԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ)

Իսկապէս պատմական կոչուելու արժանի համերգ մըն էր որ տեղի ունեցաւ Հոկտեմբերի 2ին, 2011 Կլենտէյլի Իրանահայ Միութեան նորակառուց շքեղ համալիրի դահլիճին մէջ: Արդարեւ, այդ օր Միութեան գրականութեան եւ Արուեստի Բաժանմունքը հպարտութեամբ ներկայացուց «Անմոռաց Երգեր» ու զեղեցիկ ծաղկեփունջ մը, կատարողութեամբ շուրջ կէս դարու կեանք ունեցող երազախումբին, ղեկավարութեամբ՝ Միքայէլ Աւետիսեանի:

յէլ Աւետիսեան: Ան իր ուրախութիւնը յայտնեց որ այս շքեղ դահլիճին մէջ անդրանիկ ելոյթով հանդէս կու գայ գաղութիս ամենահին եւ վաստակաշատ երգչախումբը: Ինք եւս դրուատեց զինք նախորդող ղեկավարներու նշանակալից ներդրումը, որ իր ուրոյն տեղն ունի այս գաղութի մշակութային պատմութեան մէջ:

Նախքան յայտագրի գործադրութեան ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Իրանահայ Միութեան խնամակալ Մարմնի անդամ Թոմիկ Ալեքսանեան: Ան հակիրճ պատմական ընելով երգչախումբի գործունէութեան մասին արժեւորեց եւ գնահատեցով անդրադարձաւ երգչախումբի անցած ուղիին եւ յատկապէս նախկին խմբավարներ Ալֆրէտ Մարտոյեանի եւ Ալենուշ Եղնազարի մասին, որոնք սրահին մէջ ներկայ ըլլալով, արժանացան բուռն ծափահարութեանց: Արդարեւ, անոնք «մեր գողտրիկ երգերով մեզ տարին դէպի ակունքները հայոց»:

Անցնելով յայտագրին մեզի հրամայուեցան իսկապէս անմոռաց երգերու ճոխ հաւաքածոյ մը: Արդարեւ մեր հայրենական եւ ժողովրդային երգերը վերապրում մը ունեցան շնորհիւ երաժշտական ժամանակակից նոր ութմային նուագակցութեան, վերամշակուած Միքայէլ Աւետիսեանի կողմէ («Մարտիկի երգը», «Գիշեր ու գոր», «Քնարական», «Իրիկնային Երեւան»), եւ այլն):

Այնուհետեւ, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ նաեւ երգչախումբի այժմու կորովի ղեկավարը Միքա-

Մեներգերով հանդէս եկան երգչախումբի աստեղերէն Ռոմոնա Սահակեան, Նելլա Գասպարեան եւ Արմինէ Գալստեան: Յաջողութեամբ կատարուեցան նաեւ Խ. Աւետիսեանի «Կոունկներ» գուգերով, մեկնաբանութեանը Արմինէ Գալստեանի եւ Նելլի Գասպարեանի: Երկարատեւ ծափողջոյններով դիմաւորուեցաւ օրուան հիւր եր-



# ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովը կազմած է յատուկ յանձնախումբ մը՝ մեծ շուքով սօնախմբելու դերասան, բեմադրիչ եւ ուսուցիչ՝ Գրիգոր Սաթամեանի թատերական գործունէութեան պատկառելի յիանամեակը:

Հայրենիքի թէ արտասահմանի հայութեան համար թատրոնը միշտ ալ շատ կարեւոր դեր մը ունեցած է թէ հայապահմանման եւ թէ ալ մշակութի գարգացման մէջ: Թատրոնը մեր մէջ մուտք գործած է Քրիստոսէ առաջ՝ Արտաւազդ Երկրորդ թագաւորին օրով: Յարդ՝ թատրոնը անբաժան մէկ մասնիկը դարձած է մեր գեղարուեստական գործունէութեանց, ուր որ ալ գտնուած ենք եւ ինչ պայմաններու տակ ալ ապրած եղած ըլլանք:

Ուրեմն՝ պատահական չէ որ ՀԲԸ Միութիւնն ալ իր կարգին զարկ տուած է թատրոնին, հաւատարմով որ նոր սերունդներու հալեցի դաստիարակման կարեւոր ազդակներէն մին է ան: Եւ ահա Միջին Արեւելեան երկիրներ հաստատուած հայեր կը հիմնեն թատրոն՝ ինչպիսի են Վահրամ Փափազեան թատերախումբը Պէյրութի մէջ եւ Պետրոս Աղամեան թատերախումբը Հայկապի մէջ, թեւ եւ թիկունք ունենալով մեր մեծ Միութիւնը:

Յետագայ տարիներին երբ Միջին Արեւելքէն հայեր գաղթեցին դէպի Աւստրալիա, Եւրոպա, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկա, ՀԲԸ Միութեան թատերախումբեր հիմնուեցան Սիւնիի, Փարիզի, Լոնտոնի, Նիւ Եորքի, Պոսթոնի, Տիգրոյի, Ֆոլատելֆիայի, Լոս Անճելըսի, Մոնթրէալի, Թորոնթոյի եւ Պուէնոս Այրէսի մէջ:

Այսպիսի մթնոլորտի մը մէջ մեծցած է Գրիգոր Սաթամեան: Ան 1960-ին ՀԲԸ Միութեան Յովակիմեան-Մանուկեան Երկրորդական Վարժարանը աւարտելէ ետք, կը միանայ ՀԲԸ Միութեան Պէյրութի Վահրամ Փափազեան թատերախումբի դերասանական կազմին ու գլխաւոր դերերով բեմ կը բարձրանայ արժանանալով պէյրութեան հանդիսատեսներու բարձր գնահատան-



քին: 1964-ին կ'աւարտէ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը ու կը մեկնի Լոնտոն՝ մասնագիտանալու նախ Ֆիլմմարուեստի ճիւղին մէջ՝ London School of Film Technique դպրոցին մէջ՝ ու ապա թատերական արուեստի մէջ Bristol Old Vic հանրաժանօթ ու դժուարահաճ դպրոցին մէջ:

Իր Լոնտոն կեցութեան շրջանին, Սաթամեան կը մասնակցի Հայ Երիտասարդաց Միութեան թատերախումբի գործունէութիւններուն, Վարուժան Խոշեանի եւ Գէորգ Մալիքեանի հետ:

Սաթամեան 1968-ին կը վերադառնայ Պէյրութ եւ կը նշանակուի թատրոնի դասախօս Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն ներս, միեւնոյն ժամանակ՝ ան կը ստանձնէ ՀԲԸ Միութեան Վահրամ Փափազեան թատերախումբի բեմադրիչի պատասխանատու պաշտօնը: Յաջորդող եօթը տարիներուն, Սաթամեան կը բեմադրէ 10 ներկայացումներ եւ Տիգրան Զուխաճեանի «Զուարթ» օփերէթը:

1967ին Լիբանանի եղբայրասպան կռիւներուն հետեւանքով՝ ան կը հաստատուի Միացեալ Նահանգներու Նիւ Եորք քաղաքը, իսկ 1978ին ան կը միանայ ՀԲԸ Միութեան անձնակազմին, հանդիսանալով անոր Ընդհանուր Գեղարուեստական Տնօրէնը: Կը հիմնէ

չորս թատերախումբեր Նիւ Եորքի, Պոսթոնի, Տիգրոյի եւ Ֆիլատելֆիո մէջ, բեմադրելով 18 թատերգութիւններ: Տասը տարիներ ամբողջ, ան վարեց Նիւ Եորքի ՀԲԸ Արտաշատ թատերախումբի Գեղարուեստական Ղեկավարի պաշտօնը:

1988ին Սաթամեան կը փոխադրուի Լոս Անճելըս եւ իր թատերական գործունէութիւնը կը շարունակէ իր իսկ հիմնած ՀԲԸ Միութեան Արտաւազդ թատերախումբին հետ, որպէս անոր Գեղարուեստական ղեկավարը: Սոյն թատերախումբին համար ան բեմադրած է 29 ներկայացումներ եւ 3 օփերէթներ:

1968ին Սաթամեանն է որ

Օտարները զարմացել էին, թէ այդ գեղջուկները ինչո՞ւ էին մարտանաւերով իրենց երկիր հասել, թէ՛ ինչո՞ւ նրանց ազգակիցները նման խանդաղատանքով դիմաւորում նրանց: Ի՞նչ էին նաւերից, ետ նայել, մնաք բարուն շշնացել իրենց լեռներին: Բզկտուած հոգով այրիներ, տարեցներ, մայրեր՝ իրենց մանչերը գրկերնին, թեւերից կախ ընկած՝ ողջագործել էին նրանց, նզովել իրենց երկրների տանուտէրերին, որ թշնամու դէմ կռուի կանգնելու փոխարէն՝ հնազանդութիւն էին ցուցաբերել: Առանձին խմբերով, նորէն ըստ իրենց երկրի գիւղերի բնակութեան, առաջնորդել են իրենց աւագի վրայ բացուած վրաններ, որին վրանաքաղաք պիտի կոչէին: Ազգի վրէժը գիտութեան լոյսով լուծելու ոգով հրավառ երկու աստուածաշնորհ այրեր՝ Գրիգոր ու Կարապետ, այդ վրաններից բերել էին Կիպրոսի իրենց լուսոյ տաճար, իրենց սանորդիները ամառային հանգիստը անցկացնելու հայոց Մակարայ վանքի բլուրին: Մուսալեռցի սաներս հպարտութեամբ քնում էինք նրանց հովանիի տակ, շոյում նրանց մուտքերի քղանցքները, մեր նախնինե-

րի անվեհեր ոգին եւ նրանց քաջութեան շունչը սաների սրտերին:

Դեռեւս երկու օր առաջ իրենց կանաչ հիւղակներում էին եղել, իրենց լեռների կանաչ ովկիանից յառնած գեփիւռն էր համբուրել նրանց, իրենց զէնքերի կարմիր կրակն էր լոյս փռել դէմքերին: Տաք էր եղել այդտեղ, տաք էր աւագը, ինչո՞ւ էին իրենց պոկել կանաչ լեռներից: Իրենց կամքով չէր, պիտի հանդուրժէին: Ծառեր չկային այստեղ, հապա այս մարդիկ ի՞նչ էին պաշտել: Արեւի քուրայի կարմիրում իրենց կարմիր լեռն էին փնտռել, գնային՝ այրուէին այնտեղ, ո՛չ, դեռ գալիք մարտերի վրէժխնդրութեամբ պիտի պոռթկային:

Վրանների ճամբարը անուանել էին վրանաքաղաք, իր կազմակերպչական կառույցներով՝ դպրոց Սիսվան, երեւի իրենց նախնիների Սիս ու վան մայրաքաղաքների անուններով, վրան-եկեղեցիներ, բուժարան, քաղաքապետարան, իրենց գիւղերի անուններով թաղեր: Հայկական կարմիր խաչը, Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը, Եգիպտոսի հայերը փութացել էին օգնութեան:

Եգիպտոսի անգլիական ու ֆրանսական միութիւնների պատասխանատուներ, իմանալով այդ լեռնականների սխրանքի մասին, վրանաքաղաք էին այցելել եւ նրանց մարտի յորդորող ու Պաշտպանական խորհուրդը ղեկավարող աւետարանչական պատուելի Տիգրան Անդրէասեանի հետ հարցազրոյց վարել, որի հոգում վառուած էր եղել իր նախնիների պատերազմի աստուծոյ ծնունդի եղէգան կարմիր բոցը: Հարցազրոյցը անգլերէնով հրատարակուել էր Լոնտոնի հայկական «Արարատ» լրագրում, որը, խիստ հաւանաբար, մինչեւ հիմա հրատարակուող Լիբանանի Հնչակեան կազմակերպութեան «Արարատ» լրագրի նախաշաւիղն էր եղել:

Այսպէս, Եոզուելուզ գիւղից Տիգրան Անդրէասեան, միսիոնարները եւս մի հալու հոգուց պոկել էին իր նախնիների առաքելական եկեղեցին, պատուելի օծել եւ գործուղել Ձէյթուն՝ որպէս տեղի բողոքական համայնքի հովիւի: Ձէյթունը իր քառասունմէկ յաղթական կռիւներից յետոյ, 1915 թուականին չէր պատրաստուել դիմակայելու թշնամուն, պարտուել էր: Տիգրանը, իր կնոջ հետ, ականատես էր եղել տարագրութեան ճանապարհների հայերի սարսափահար տառապանքներին: Ծնորհիւ միսիոնարների միջնորդութեան՝ կարողացել էր ժամանել հայրենի Եոզուելուզ գիւղի հայրական տուն:

Տիգրանը մեծ հիացմունքով ու հոգեկան հրճուանքով է նկարագրել հայրենի գիւղի հմայքը, նրա ջանասէր մարդկանց, նրա լանջերին յառնած այգիները եւ, ըստ ճանապարհորդների պատմածի, այն եղել է շատ նման Իտալիոյ Նափոլի քաղաքի շրջակայքի գիւղերին:

Կրճատ շարադրում եմ նրա հարցազրոյցի ճշգրիտ բովանդակութիւնը, որը դեռ երկու օրեր առաջ տեղի ունեցած դէպքերի իսկական վկայութիւնն է: Չարմաւալի է, որ նա չի յիշատակել

մարտերի խիզախ մասնակիցների անուններ, Պաշտպանական խորհուրդի կազմը եւ ճակատամարտերի այլ մանրամասնութիւններ, թէ՛ հարցազրոյցը թարգմանողները անփոյթ կերպով այն չեն սղագրել:

Յուլիսի 13-ին Անտիոք քաղաքի թրքական իշխանութիւնները ազդարարագիր էին ուղարկել Մուսա Լեռան վեց գիւղերին՝ ութ օրուայ ընթացքում պատրաստ լինելու տեղահանութեան: Գիւղերի աւագանիի անդամները համատեղ քննարկել էին ստեղծուած իրավիճակը: Թէեւ թրքական ուժերին դիմակայելու չաջողութեան յոյսը նուազ էր թուացել իրենց, սակայն որոշել էին «Ոչ» ասել տարագրութեանը. ո՞ւր եւ ինչո՞ւ: Նկատի ունենալով, որ նախալեռներում գտնուող գիւղերի պաշտպանութիւնը անհնարին էր իրականացնել, վճռել էին ազատ ապրելու, իրենց կանանց արժանապատուութեան, մանկանց ու ծնողների կեանքի փրկութեան համար բարձրանալ իրենց լեռներ, ապաւինել նրա բարձունքներին, որի իւրաքանչիւր արահետ ծանօթ էր իրենց: Սակայն Պիթիաս գիւղի աւետարանչական հովիւ Յարութիւն Նուխուտեանը, որի հոգուց պոկել էին իր նախնիների ռազմի ոգին, անհնար էր համարել դիմադրութիւնը եւ վաթսուս ընտանիքներ իր գիւղից եւ նշանակալի թուով ընտանիքները Հաճի Հապապլի գիւղից տարագրութեան էր տարել, որոնցից շատերը իրենց մասն էին գտել արաբական անապատներում:

Ազդարարութեան աւարտի ութերորդ օրուայ վերջին՝ Յուլիսի քսանին, արդէն լեռան բարձունքին էին եղել: Իրիկնադէմից սկսած ամբողջ գիշեր տեղատարափ անձրեւ էր տեղացել, թրջուել էին, սակայն իրենց արի հոգիները տաք էին, կռուի էին գնալու: Առաւօտեան արեւն էր ժպտացել նրանց, աշխատանքի ընդունակ բոլոր լեռնականները սկսել են խրամատներ փորել, ռազմական նշանակութեան դիրքեր կառուցել, լեռան գառիվայր բարձունքներին ժայռեր կուտակել, ստեղծել հզօր պատնէշներ, որտեղ հրաձիգների խմբեր էին տեղաբաշխել, պատրաստ՝ դիմակայելու թշնամու յարձակումներին:

Նոյն օրը, փրկութեան պատերազմը դիմադրաւելու համար, լեռ բարձրացած ժողովուրդի ընդհանուր ժողով են գումարել: Ժողովականների իսկ առաջարկութեամբ, քուէաթերթիկներով գաղտնի քուէարկութիւն էին կատարել՝ Պաշտպանական խորհուրդ ընտրելու համար, որը հետագային պիտի իրականացնէր գերագոյն իշխանութիւն: Հայ, քեզ չկարողացան հանդուրժել արեւմտեան քաղաքակրթութեան փարած լինելու համար, իսկ մօտակալ մահմետական գիւղերի բնակիչները քուէաթերթիկներով գաղտնի ընտրութիւն կատարելու երազանքն անգամ ունեցե՞լ էին արդեօք: Խորհուրդի կազմի մասին ոչ մէկ տեղեկութիւն է յիշատակուել, որը անմիջապէս ձեռնամուխ է եղել պաշտպանական միջոցառումներ իրականացնելու աշխատանքներին:

Յուլիսի 21-ին երկու հարիւր գիւնուորներով թրքական առաջա-

պահ մի պահակախումբ յարձակում էր սկսել լեռնականների դիրքերի վրայ: Հրամանատարը՝ Սուէտիոյ «Միւտիւր» (կառավարիչ) ալպանացի ծագումով Խալիտը խոստացել էր, որ մէկ օրուայ ընթացքում լեռը մաքրելու էր ապստամբներից: Թուրքերը, յամառ դիմադրութեան հանդիպելով ու մարդկային կորուստներ կրելով, ետ էին քաշուել իրենց գիւնուորական կայան: Յաջորդ օրերին թրքական կանոնաւոր զօրքի ստորաբաժանումներ ծաւալուն յարձակումի էին ձեռնարկել: Թշնամին իր հետ բերած հրանօթով հարուածել էր ապստամբների ճամբարը: Մի յանդուգն ռազմիկ՝ Պետրոս Գալուստեան, թիփերի ճիւղերով քողարկուած, մօտեցել էր հրանօթին, տարբեր դիրքերից հրացանի հինգ կրակոցներով սպաննել չորս թնդանօթաձիգներին: Հրամանատարը շտապել էր հեռացնել թնդանօթը:

Համախումբ յարձակման համար թուրքերը զօրահրաման էին ուղարկել շրջակայ իսլամական գիւղերին՝ ժողովուրդին սրբազան պատերազմի կոչելու: Անտիոքի գիւնացից հրացաններ ու գինամթերք էին յանձնել նրանց: Արիւնահեղութեան ծարաւի մուսուլմանների չորս հազարանոց ամբոխը դարձել էին նշանակալի թշնամի: Սակայն նրա գլխաւոր ուժը երեք հազարանոց զօրամասն էր եղել:

Լեռնականների հետախոյզները տեղեկացրել են ռազմական, որ թշնամին բարձունքների յարակից կիրճերում էր յայտնուել, սկսել առանձին լեռնագագաթների վրայ գրոհել, որտեղ տեղաբաշխուած էին միայն փոքրիկ խմբեր: Թշնամու առաջախաղացումները կեղծ յարձակում էին հանդիսացել: Այնուհետեւ մէկ կիրճի միջով գանգուածային յարձակում են ձեռնարկել եւ տիրել ճամբարի դիմացի բարձունքների տարածքին: Խիտ անտառների ու մացառուտների միջով թշնամու վաշտեր կարողացել են առաջ շարժուել եւ հասնել ճամբարից հինգ հարիւր մեթր հեռավորութեան սահմանագծին, որի մէջտեղը խորը ու խոնաւ կիրճ էր եղել: Թշնամին որոշել էր ճամբարել այդտեղ, քան թէ մթութեան մէջ շարունակել յարձակումը:

Պաշտպանական խորհուրդը շտապ նիստ է գումարել: Մութ տազնապ էր իշել ճամբարի վրայ, իրենց զէնքերի լոյսով պիտի վառուէին այդ գիշեր: Չորս հազարից աւելի արմէններ էին կանաչ հիւղակներում, առաւօտեան արեգակի լոյսով փրկութեան ծիածան պիտի կապէին իրենց հոգիներում, յաղթանակի շեփորների ու թմբուկի կանչերով պիտի ողջունէին լեռն իրենց: Որոշել էին կէս գիշերին թրքական զօրքի շուրջը սողոսկելով՝ շրջապատման գործողութիւն իրականացնել, միաժամանակ յանկարծակի հրաձգութեամբ գրոհել թշնամու վրայ, իրենց զէնքերի կրակով մարել նրանց հոգիների լոյսը եւ մարտի ընթացքի բերումով, ձեռնամարտի բռնուել նրա հետ: Որոտացել էին զէնքեր բազում, կարծես երկինքն էր պատուել ու գեհնի կրակն էր թափուում թշնամու վրայ: Քաջերի շառաչուն



### ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ

Մտահոգությունը շատ սովորական հարց մըն է եւ մարդիկ երբեմն կը մտահոգուին, պատահին երբ առաջին հանդիպումը կ'ունենայ հակառակ սեռի պատկանող անձի մը հետ, չափահասը երբ փողովուրդին հետ տեսակցութիւն կ'ունենայ, բժշկութիւն ուսանողը երբ առաջին առանձին վիրաբուժութիւնը կատարէ, աշակերտը երբ քննութեան հարցարանը ստանայ: Այս բոլորը մտահոգութեան բնական աղբիւրներն են եւ այս պարագաներուն այդ նոյնիսկ օգտակար կը համարուի, որովհետեւ այդ մեզի կը մղէ ինքիւններու պատրաստելու եւ անոնց հետ վերաբերելու: Այն անձը, որ մտահոգութիւն չի զգար, ձախողութեան վտանգին կ'ենթարկուի:

Երբ մտահոգութիւնը զօրաւոր ըլլայ եւ շարունակէ անձին հետ մնալ ամիսներով ու տարիներով, տիրապետելով անոր մտածումներուն վրայ, այս պարագային այդ կը կոչուի հիւանդագին մտահոգութիւն (pathological anxiety), երբ անձին վրայ կ'իշխեն մտածումներ ու երեւակայութիւններ, որոնց պատճառով ան կը կարծէ, թէ վտանգ մը կը սպառնայ իրեն: Այս մէկը մտահոգութեան հիւանդութիւնն է: Այս տեսակի մտահոգութեան որպէս արդիւնք, անհատը ընդհանուր եւ ծածուկ վախ կը զգայ սպառնալէն: Այս զգացումը ընդհանրապէս կ'ազդէ անոր մտածելակերպին ու կեդրոնացման վրայ, հետեւաբար, զինք ջղախին եւ լարուած դարձնելով:

Այս տեսակի մտահոգութիւնը ներքին է, առանց այդ մտափախութեանց յստակ պատճառ ըլլալու: Այս վիճակը առանձնապատուկ պատճառ չունի, սակայն կենսաբանական, ժառանգական, միջնորոտային ու ընկերային գործոններ կրնան ազդեցութիւն ունենալ: Կարգ մը մարդիկ, իրենց ժառանգական-կենսաբանական կազմուածքին պատճառով հակամէտ կ'ըլլան (ուրիշներէն աւելի) այս հիւանդութեամբ տառապելու:

Բացառապէս իրականութիւն մըն է, թէ միջնորոտային ու ընկերային գործոնները գլխաւոր դեր կը խաղան մտահոգութեան ու անապահովութեան զգացումը աւելցնելու: Մտաքին կողմէ ցուցաբերուած աւելորդ հովանաւորութիւնը պատճառ կը դառնայ պատիկին մօտ մտահոգ անհատականութիւն մը յառաջացնելու:

Այս պարագան ունեցողներուն բուժումը կարելի է ամէնէն առաջ այդ անձին մտածելակերպը փոխելով, որովհետեւ այդ անձը անկասկած կը տառապի մտածելաձեւէ մը, որ զինք հեռու կը պահէ իրականութենէն եւ զինք կը մղէ ընկղմելու արդարացում չունեցող տխրութեան մէջ: Հետեւաբար, առաջին քայլը պէտք է ըլլայ որ այս անձը պարզութեամբ նայի ու մօտենայ հարցերուն, եւ ոչ թէ կարգ մը վնասներու հաւանականութիւն ունեցող հարցերուն նայի որպէս իսկական վտանգաւոր դերք:

Այդ անձը պէտք է նաեւ չմտահոգուի հեռու սպառնալով, ինչպէս նաեւ ան պէտք չէ ներկայ ժամանակը թունաւորել հեռու եւ տխրեցուցիչ մտածումներով ու զաղափարներով: Հետեւաբար, հարկ է մեր կեանքը լեցնել հետաքրքրական գործունէութիւններով:

Երբ անձ մը չ'աշխատիր, իր ուղեղը կը թեքի իր մտահոգութիւններուն ու մտափախութիւններուն մասին մտածելու: Թերեւս այս կէտին ամէնէն յարմար օրինակ

կը կը հանդիսանայ Ուինսթըն Չըրչըլին խօսքը: Չըրչըլ, որ օրական 18 ժամեր կ'աշխատէր պատերազմին ընթացքին, երբ իրեն հարցում ուղղած են, թէ արդեօք ինք մտահոգ է, ան պատասխանած է հետեւեալ ձեւով. «Ես շատ զբաղած եմ եւ մտահոգութեամբ ժամանակ չունիմ»:

Մտահոգ անձը երանի չիշէ, թէ այդ մտահոգութեամբ հարցերը որոշ տոկոս համեմատութեամբ կրնան չպատահիլ եւ երանի ան ինքզինքին հարց տայ, թէ ի՞նչ են իր մտահոգութեան իսկական ու համոզիչ պատճառները: Արդարեւ, ան պէտք է նայի իր առջեւ գտնուող եւ յստակ եղող բաներուն, եւ ոչ թէ նայի միջոցներուն ու անյայտութեան մէջ գտնուող բաներուն: Մտահոգ եղող անձը պէտք է գիտակցի այն իրականութեան, թէ երբեմն մենք բոլորս ենթակայ կ'ըլլանք նեղացուցիչ պարագաներու, երբ անկարող կ'ըլլանք զանոնք փոփոխութեան ենթարկելու եւ ստիպուած կ'ըլլանք զանոնք ընդունելու: Սակայն այս չի նշանակել, թէ պէտք է յանձնուիլ, այլ պէտք է յարատեւ աշխատանք տանիլ այդ պարագաները դիմակալելու եւ փոխելու, կամ ընդունիլ զանոնք որպէս իրականութիւն, եւ այս մէկը աշխարհին վերջը ըլլալ չի նշանակել:

Ամէնէն յարմար եւ դիւրին բուժումը կը կայանայ ինքզինք այս մտահոգութեան հարցով չկորսնցնելուն մէջ: Պատահած հարցերով մտահոգուիլը անօգուտ է. սակայն այս չի նշանակել, թէ բոլոր հարցերը իրար վրայ պիտի հաւաքուին, որովհետեւ հարկ է, որ վաղը նոր ծագելիք արեւը իր հետ բերէ նորարար յոյսեր:

Բոլորս ալ մտահոգութենէ կը տառապինք, սակայն հիւանդագին մտահոգութեան գոհ եղողները ուրիշներէն աւելի կը տառապին: Եթէ բնական մտահոգութիւնը որոշ չափով օգտակար է, հիւանդագին յարատեւ մտահոգութիւնը կրնայ տապալել ենթակային կեանքի վայրկեանները եւ անոր առիթ չտալ այլ ամրոց նման ապրելու:

«Կեանքը յարատեւ ժպիտ ու արցունք է: Արտասուքը յաճախ կը փորձէ թափանցել սրտիդ խորքը մարելու կեանքիդ ուրախ շողերը: Բայց չփակեա սիրտդ ու մոռնաս կամքդ: Յիշէ՛, չիշէ, թէ ամէն մայրամուտէ ետք... վերստին կը ծնի վաղուան արեւը»:

### 7 ԿԵՏԵՐ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ Կ'ԱՌԱՋՆՈՐԴԵՆ

Երբեմն մենք մեզի հարց կու տանք, թէ արդեօք իսկապէ՞ս ուրախ ենք: Արդեօք գիտե՞նք ինչ ըսել է ուրախ ըլլալ եւ թէ ի՞նչ պէտք է երջանկութիւն ձեռք բերելու համար: Այս հարցումները կարելի են երջանկութիւն փնտռող ունէ անձի համար: Եթէ կ'ուզես ուրախ ըլլալ, պէտք է հասկնաս, որ կրնաս ուրախ ըլլալ եւ պէտք է որ ըլլաս: Բազմաթիւ անձեր կը սխալին հաւատալով, որ իրենք արժանի չեն երջանիկ ըլլալու եւ անոնք կ'ընդունին իրենց տխուր վիճակը որպէս իրենց ճակատագիրը: Իրականութիւնը այն է, որ երջանկութիւնը, կեանքի մէջ այլ հարցերու շարքին, պէտք է սնուցուի: Արդարեւ, հետեւեալ տողերուն մէջ պիտի գտնենք մի քանի կէտեր, որոնց հետեւելով կարելի է հասնիլ երջանկութեան:

1) Հասկցիր, թէ ի՞նչը քեզի ուրախ կը պահէ: Մեզմէ իւրաքանչեւը իրեն յատուկ պահանջներ ունի երջանիկ զգալու. այն ինչը, որ անձի մը կ'ուրախացնէ, կրնայ երկրորդին ուրախութիւն չպատճառել: Անձնապէս գուարճացիր եւ մի մտահոգուիր, թէ քու ցանկութիւններդ կը համեմատուին ընկերներու ցանկութիւններուն հետ թէ ոչ:

2) Ծրագիր դիր յաջողցնելու այն նպատակները, որոնք կը հաւատաս թէ պիտի երջանկացնեն քեզի: Տրամադրութիւնդ պիտի բարելաւուի, երբ հասնիս այդ նպատակին, որովհետեւ դուն քու անձիդ հանդէպ շատ աւելի լաւ պիտի զգաս, հետապնդելով քեզի համար արժէքաւոր համարուող նպատակ մը:

3) Ինքզինքդ ուրախ մարդոցմով շրջապահու: Դիւրին է բացասական կերպով մտածելու սկսիլ, երբ շրջապատուած ըլլաս այդպէս մտածող մարդոցմով: Մինչ երբ շուրջդ գտնուին ուրախ մարդիկ, անոնց զգացական վիճակը վարակիչ պիտի ըլլայ:

4) Երբ հարց մը սխալ ընթանայ, փորձէ լուծումի մը մասին

մտածել, փոխանակ ափսոսանքի ալիքներուն մէջ թաւալելու: Իսկապէս երջանիկ եղող անձերը թոյլ չեն տար, որ այսպիսի հարցեր ազդեն իրենց տրամադրութեան վրայ, որովհետեւ անոնք գիտեն, որ պատիկ մտածումով մը, անոնք կրնան պայմանները իրենց նախասիրած վիճակին վերադարձնել:

5) Շատ կարեւոր է, որ իւրաքանչիւր օրուան ընթացքին ժամանակ տրամադրել մեր անձին նկատմամբ լաւ բան մը կատարելու, ըլլայ այդ ճաշ մը ուտել, երկար ու հանգստաւէտ լողանք մը առնել կամ տեսքիդ բարելաւման համար քանի մը յաւելեալ վայրկեաններ տրամադրել, որոնք անգիտակցաբար աւելի լաւ տրամադրութիւն կը պարզեցնեն անհատին:

6) Առողջութիւնդ պահելու ուրիշ ձեւ մըն է երջանկութիւն ձեռք բերելու: Բնականէն աւելի զէր ըլլալը կամ աննորարար ուտելիքներ չուտելը կրնան բացասական ազդեցութիւն ունենալ տրամադրութեանդ վրայ: Ասոր կողքին հարկ է նշել մարզանքի կարեւորութիւնը, որովհետեւ մարզանք կատարելով կնտրոֆին հորմոնը կ'արտադրուի, որ իր կարգին երջանկութեան զգացում կը յառաջացնէ:

7) Ի վերջոյ, շատ կարեւոր է հասկնալ, որ արժանի ես երջանիկ ըլլալու: Անոնք, որոնք կը հաւատան, թէ արժանի չեն երջանկութեան, անգիտակցաբար կը պայքարին երջանկութիւն ձեռք բերելու դէմ: Եթէ անհրաժեշտ ըլլայ, ամէն օր ինքզինքիդ ըսէ, որ արժանի ես ուրախանալու եւ չիշեցուր ինքզինքիդ ի՞նչ քայլեր պէտք է առնես այդ նպատակին հասնելու համար:

Երջանկութիւն բառը դժուար է սահմանել, բայց մարդոց մեծամասնութիւնը գիտէ եթէ ինք ուրախ է թէ ոչ: Մեծ թիւով մարդիկ կը հաւատան, որ երջանկութիւնը բախտի ձեւ մըն է, կարգ մը մարդիկ ճակատագրուած են ուրախ ըլլալու, մինչ ուրիշներուն ճակատագիրն է տխուր ըլլալ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝  
հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O.  
1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

<b>ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒԿ</b>	ST. GREGORY ARMENIAN CHURCH <b>Geragos</b> BANQUET HALL OF PASADENA	<b>NEWLY REMODELED</b>
	<b>Now ready to host your</b>	
	<ul style="list-style-type: none"> <li>• Wedding</li> <li>• Baptism</li> <li>• Anniversaries</li> <li>• All other happy &amp; sad events.</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բարսանիք</li> <li>• Մկրտութիւն</li> <li>• Տարեդարձ</li> <li>• և ամէն ուրախ ու տխուր առիթներ:</li> </ul>
<b>ՎԱՏԷ 562-715-8730 ՎԱԿԷ</b>		
<b>Լաւագոյն և յարմարագոյն գիներով ձեզ կ'սպասարկենք</b>		



### ՄՈԼԻ՞ ԵՍ ԲՋԻՋԱՅԻՆ ՀԵՌԱԶԱՅՆԻԴ

Մենք այսօր կ'ապրինք արհեստագիտութեան եւ գիտական յայտնագործութիւններու դարուն մէջ, որոնք յեղափոխութիւն յառաջացուցած են մեր ապրելակերպին մէջ: Քայլ պահելու համար այս արագ յառաջընթացին եւ օրէ օր վերանորոգւող արհեստագիտութեանց, մենք պէտք է սպառենք անոր արտադրութիւնները, ինչպէս բջիջային հեռաձայնը եւ այլ ելեկտրոնային գործիքները, որոնք դիւրացուցած են մեր կեանքը:

Թերեւս բջիջային հեռաձայնը ամէնէն ժողովրդական եւ տարածուած գործիքն է այժմու շրջանին, անոր ունեցած օգուտներուն, փոքր չափին եւ միշտ փոփոխութեան ենթակա ձեւին համար: Բջիջային հեռաձայնը լայն տարածում եւ ընդունելութիւն գտաւ շրջանակի տարբեր խաւերու եւ զանազան տարիքներու պատկանող անհատներու մօտ:

Բջիջային հեռաձայնը դարձած է պատանիներուն եւ կիներուն ընկերակիցը, կեանքի անբաժանելի մասնիկը: Հետեւաբար, այս անձերուն համար այդ այսօր վերածուած է մոլորցի. եթէ պատահի, որ անոնք իրենց բջիջային հեռաձայնը տունը մոռնան, անոնք իրենք զիրենք կորսուած կը զգան: Արդեօք դուն ալ քմահաճ կ'ըլլա՞ս առանց բջիջային հեռաձայնիդ, դուն ալ մոլի՞ ես անոր:

1) Բարեկամներուդ հետ ընթրիքի կը գտնուիս եւ բջիջային հեռաձայնդ կը հնչէ:

Ա) Չես պատասխաներ եւ ապա նամակի ձեւով կ'արձանագրուի: (0)

Բ) Կը հեռանաս եւ կը պատասխանես: (1)

Գ) Երկրորդ անգամ չհնչած արդէն կը պատասխանես (3)

2) Ընտանիքիդ խօսք տուած ես հետերնին շուկայ երթալ, սակայն ուշացած ես եւ տունէն քանի մը փողոց անդին: Ի՞նչ կ'ընես.

Ա) Ինքնաշարժը արագ կը բռնէ որ աւելի շուշանաս: (1)

Բ) Կը նայիս եթէ sms գրած են քեզի՝ ծրագիրը յետաձգելու: (2)

Գ) Կը հեռաձայնես եւ կ'ըսես թէ քիչ մը պիտի ուշանաս: (3)

3) Նոր ծանօթացած անձի մը կը խոստանաս sms-ով պատասխանել որոշ հարցի մը շուրջ, բայց ան կ'ըսէ, թէ բջիջային հեռաձայն չունի: Ի՞նչ կ'ըլլայ վերաբերմունքդ.

Ա) Կը համաձայնիս հանդիպել եւ ուղղակի խօսիլ: (1)

Բ) Կը մոռնաս անոր հարցը, քանի որ չես փափաքիր այսպէս ձախող անձի մը հետ գործ ունենալ: (3)

Գ) Կ'առաջարկես անոր տան թիւին հեռաձայնել եթէ այդ մէկը հնարաւոր է: (20)

4) Ընտանիքիդ հետ շաբաթավերջը պիտի անցընես վայրի մը մէջ: Հոն հասնելէդ ետք կը նկատես, թէ բջիջային հեռաձայնդ տունը մոռցած ես: Այս ի՞նչ կը նշանակէ քեզի համար.

Ա) Հոգ չէ, գոնէ քիչ մը հանգիստ կ'ընես: (1)

Բ) Կը նայիս եթէ կրնաս ազգականներէդ մէկուն բջիջային հեռաձայնը փոխ անունել: (2)

Գ) Կը ջղայնանաս եւ անպայման կը փափաքիս վերադառնալ՝ զայն առնելու: (3)

5) Որքա՞ն ժամանակ ետք բջիջային հեռաձայնիդ եղանակը կը փոխես.

Ա) Ամէն օր: (3)

Բ) Նուազագոյնը շաբաթը մէկ անգամ: (2)

Գ) Թերեւս ամիսը մէկ անգամ կամ աւելի ուշ: (1)

6) Ղրկած sms-ներուդ օրական միջինը որքա՞ն է.

Ա) Երբեմն բնաւ չեմ ղրկեր: (0)

Բ) Քիչ: (1)

Գ) Դժուար է զանոնք հաշուել: (3)

7) Առաւօտեան երբ առաջին անգամ բջիջային հեռաձայնը ձեռքդ առնես, ի՞նչ կ'ընես.

Ա) Կը նայիս եթէ sms եկած է: (1)

Բ) Դուն sms կը գրես: (2)

Գ) Ոչ մէկ բան: (3)

Բջիջային հեռաձայնիդ ունեցած յատկութիւններէն քանի՞ն աշխատցնել գիտես.

Ա) Անոր յատկութիւնները այդքան բարդ են, որ տակաւին չես ամբողջացուցած ցուցմունքներու գրքոյկը կարդալը: (1)

Բ) Բոլորին աշխատցնելու կերպը գիտես: (3)

Գ) Միայն գիտես հեռաձայն ընել եւ ստանալ: (2)

9) Մանաւանդ ինչի՞ կը գործածես բջիջային հեռաձայնդ.

Ա) Հեռաձայններ կատարելու կամ sms ղրկելու: (3)

Բ) Անոր հետ ժամանակ անցընելու: (2)

Գ) Պճնամոլութեան համար: (1)

ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ

\*Եթէ հաւաքած ես 5-էն 12-ի միջեւ կէտեր.- Յտակ է, թէ դուն մոլի չես բջիջային հեռաձայնիդ: Ունիս այդ գործիքէն, որովհետեւ գործնական է: Առանց պատճառի եւ անտեղի գործածելու փոխարէն, դուն զայն կը գործածես անհրաժեշտութեան եւ անակնկալ պարագաներու: Բջիջային հեռաձայնին հանդէպ կեցուածքդ առողջ եւ տրամաբանական է:

\*Եթէ հաւաքած ես 13-էն 19-ի միջեւ կէտեր.- Բջիջային հեռաձայնիդ կը նայիս որպէս գուարճութեան միջոց մը՝ բարեկամներու հետ կապի մէջ մնալու համար: Թէեւ կը ներդանաս եթէ ստիպուիս անկէ բաժնուիլ, սակայն այդ պարագան աղէտ մը չես նկատեր: Այնքան ատեն որ այս կեցուածքը



կը պահես բջիջային հեռաձայնին նկատմամբ, ուրեմն վտանգ չկայ որ դուն անոր մոլի դառնաս:

\*Եթէ հաւաքած ես 20-էն 27-ի միջեւ կէտեր.- Դուն իսկապէս մոլի ես բջիջային հեռաձայնին: Փորձէ այս կեցուածքէն ձերբազատիլ, այլապէս վստահաբար նիւթական շատ վնասներ պիտի կրես: Ուշադիր եղիր, որ բարեկամներուդ ներկայութիւնը չանտեսես բջիջային հեռաձայնով ուրիշ մը հետ խօսելու նպատակով: Մոլութիւնդ կրնայ քեզի անհաճոյ պարագաներու առաջնորդել:



## "Քաջ Նապար" հանդէսը եւ հեռուստաժամը

### Ներկայացնում է

# 12-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ

Ռ ՆՊԱՍՏ ՍՈՒՐԸ ԾՆՈՒՆԴՐ ԲՈՄՆԱԴՐԱՄԻ, ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆՊԱՄ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՅ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ԿԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԵԱՆ ԲԱՄԱՐ

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Միջին Հայրենակիցներ, Կիրակի, Հոկտեմբեր 9-ին, Հայաստանի ծնողագործի Հաշմանդամ երեխաների ֆոնտի կողմից կազմակերպուած Թելեթոնի ընթացքում, Հեռախօսային կապի խանգարման պատճառով 3,5 (երեքուկէս) ժամանակ կորուստ ունեցաւ, Հեռախօսարար և նախարարների զգալի կորուստ: Ուստի, Ֆոնտի գործադիր մարմնի որոշմամբ, և ղեկավար խիստ մտահոգուած մեր Հայաստանի ու Հայրենասէր Հայրենակիցներին բաւարարութիւն տալու համար, այս Կիրակի, Հոկտ. 16-ին, երեկոցեան ժամը 8.30-ից մինչև 12.30, AMGA-ի 380 կայանից 4-ժամանակ Teletthon տեղի կ'ունենայ:

Ներկայ են լինելու բացառիկ և մեր կողմից սիրուած հիւրեր:

Մեր Հայրենի անմեղունակ, զրկուած և զարկուած երեխաների օգնութեան ձայնին պատասխանելու փրջին պատեհ առիթն է որ մեզ կ'ընծայուի: Թնդրում ենք, սատար հանգիսացէք մեզ, մեր այս սուրբ և նախնական գործում:

**ՅՈՎՀ. ԲԱԼԱՅԵԱՆ**  
Հայաստանի ծնողագործի և Հաշմանդամ երեխաների ֆոնտի նախագահ և գործադիր մարմին

HELP OUR CHILDREN TO BUILD THEIR FUTURE  
www.forourkids99.com • e-mail:forourkids99@gmail.com

**AMGA**  
**CHANNEL 380**  
Glendale, CA  
**From 5:00 pm**  
**11:00 pm**

Everyday we build the dreams and future of our children with your generous donations. In their prayers they remember you and give their blessings upon you.

Ձեր օգնութեամբ մեք ամէն օր կառուցում ենք, հանգստութիւն և ուրախութիւն պարգևում հայրենի կարօտնակ երեխաներին: Նրանք իրենց ազօրեանում միշտ յիշում և օրհնում են մեզ...

Spitak #1 School 2009

Spitak #1 School 2010

Spitak #1 School 2011



**ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍԻ ԻՐԱՆԱԿԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԱՐ ԵՊԱՐՏՈՒԹԵԱՍԲ ՏՕՆԱԽԱՐԵՑ ԻՐ 55 ՏԱՐԻԱՅ ԵՐԱԶԻՆ ՆՈՒԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ**

**Շարունակում է 1-ին**

Երեխայ-մը եւ Կրթական Հիմնադրամ: Շարքը երկար է եթէ փորձենք յիշատակել բոլորը, որոնց մէջ յատուկ տեղ կը գրաւեն համաճում միութեան խնամքին յանձնուած աւելի քան 600 կարիքաւոր երեխաները, քաղաքապետ Երեւանի մէջ: Այսօր Երեւանի քաղաքապետարանի մէջ

Հիմա, որ Լոս Անճելէսի Իրանահայ Միութիւնը, որ Շարք 8 շուրջ տեւեմբեր 2011-ին մի անգամ ընդմիջ տեղափոխուեցաւ իր ընդարձակ, պատկառելի եւ գեղակոտոյց բազմամաս մշակութային կենտրոնը, տարակոյս չկայ՝ նոր քափ, կշիռ եւ որակ պիտի տայ իր ազգային, հայրենասիրական, մշակութային եւ բարեսիրական համընդհանուր առաքելութեան, ի փառս հայապահպանման մեր նուիրական պայքարին եւ հայ մշակոյթի տարածման:

Հայ ժողովուրդի գոյութեան պահպանման ամենավստահելի, անվիճելի եւ ուժեղագոյն երաշխիքներէն կը հանդիսանայ անոր ազգային մշակոյթը: Ան է որ կ'իմաստաւորէ հայ մարդու ազգային ինքնութիւնը: Ան է որ կ'երաշխաւորէ օտարամուտ ցկարագրի այլասերող գիծերու, կորստաբեր բարբերու հեռացումը, մաքրագոր-

ծումը անոր մէջէն: Ան է, որ հայ մարդու միտքն ու հոգին կ'ազատագրէ օտարաբոյր, ստրկացնող հմայիչ կապանքներէ: Ան է որ կը յղկէ, կ'ազնուացնէ, կը ներշնչէ, կը խրախուսէ եւ կը հարստացնէ գանձնէ: Ան է, որ կը զինէ միտքն ու հոգին, իր տարբերակը չունեցող միանշաշակ ներուժով մը, որուն սրբազան բաղադրամասերը կը հանդիսանան մեքոպաշունչ հայտնութիւնը, երաժշտութիւնը, պատմութիւնն ու ազգային ասանդութիւններու պահպանումը:

Այս մտորումները ունեցայ երբ դուրս եկայ Լոս Անճելէսի Իրանահայ Միութեան կազմակերպած հոգեպարար, այլ՝ երախտաշատ ձեռնարկէն, ուր բարձրաձայն յանձնառութիւն կը վերցուէր լուսաւոր նոր հորիզոններ բանալու, տասնամակներ իր ծաւալած հայատրոփ, այլապէս ազգանուէր գուպարի առջեւ:

Ազգօգուտ ծրագրի մը հպարտացուցիչ կատարելագործութեան դէմ յանդիման՝ երախտապարտ հոգիով մեր շնորհաւորութիւնները կը յայտնենք Լոս Անճելէսի Իրանահայ Միութեան նորակառոյց շէնք կեդրոնի բացման կապակցութեամբ եւ կը մաղթենք բարի նոր երբ:

**«ԱՆՍՈՒԱՅ ԵՐԳԵՐ»**

**Շարունակում է 7-ին**

գիչ երիտասարդ թենոր Սուրէն Մկրտիչեանը: Ան իւրաքանչեւ մեկնաբանութեամբ կատարեց Արտեմի Այվազեանի «Ովսաննա»-ն, ինչպէս նաեւ կարգ մը նոսր թէնքեր: Սոյն յիշատակելի համերգն աւարտեցաւ Գ. Պետրոսեանի յորինած «Հայաստան» խմբերգով: Կ'իմանաք թէ «Անմուտաց Երգեր» համերգը պիտի կրկնուի

նաեւ յառաջիկայ Նոյեմբերի 6-ին, 2011 միեւնոյն վայրին մէջ: Կը շնորհակարտեմք Իրանահայ Միութիւնն ու անոր գրականութեան եւ Արուեստի բաժանմունքը, մասնաւորաբար երգչախումբն ու գեղարուեստական ղեկավար Միքայէլ Աւետիսեանը, մաղթելով կանաչ ճանապարհ, վերանորոգուած եռանդով շարունակելու իրենց ազգանուէր գործունէութիւնը: Գ.Մ.

**ՇԱՌԼ ԱԶՆԱԿՈՒԻԻ ՑՆՑՈՂ ԶԱՐՑԱԶՐՈՅՑԸ.**

**Շարունակում է 6-ին**

տազայ փորձերից: Շ. Ա. - Ոչ, Պէտք է ընդունել, որ շարքազոր այնպիսի պետութիւն է, ինչպիսին կայ: Անկախ, ինչպէս Ատրպէյճանը եւ Հայաստանը: Ես ուսուցիչս եմ: Nouvel d'Armenie - Դուք համաձայնեցնում էք Ձեր սման դիրքորոշումները հայկական իշխանութիւնների հետ:

Շ. Ա. - Երբ ես քննարկում եմ հայկական իշխանութիւնների հետ, ինչ միշտ ասում են, որ ես իրաւացի եմ: Բայց նրանք ոչինչ չեն ասում: Նոյնը՝ Ֆրանսայում: Հնարաւոր չէ խօսել իշխանութիւնների հետ: Ինչպիսին որ նրանք լինեն: Ես չեմ հաւատում, որ Ֆրանսան մեզ համար որեւէ բան կ'անի: Դա ոչնչի չի ծառայում: Թուրքիան շատ կարեւոր է Ֆրանսայի համար: Չենք կարող դա անտեսել: Ֆրանսայում միշտ իրենց ամենաուժեղն են ձեռացնում, բայց ընտրութեան պահին տարբեր է: Ֆրանսան ոչինչ չի անի հայերի համար: Ահա սպասման 90 տարիները: Գրքեր են գրուել, տարբեր տեսակի մարդիկ են արտայայտուել՝ ի պաշտպանութիւն հայկական հարցի, եւ դրանից ոչինչ դուրս չի եկել:

Եւ դուք այսօր հրաշք էք սպասում, այն պարագայում, երբ բացառիկ խաղաղութիւններ կան, որոնք մարտնչում են դրա դէմ: Կարելի է ուսուցիչս լինել, բայց պէտք է չափազանց երազկոտ լինել: Ես չեմ երազում: Իմ կեանքն ապացուցում է, որ ես չեմ երազել: Ես աշխատել եմ: Ես քաղաքական գործիչ չեմ: Ես ոչ խելամուտ թիւն ունեմ, ոչ կուլտուրա՝ ասելու համար այն, ինչ հաստատում եմ: Բայց ես դա անկեղծ եմ ասում, որովհետեւ այդ եմ մտածում: Nouvel d'Armenie - Դուք միշտ հետաքրքրու՞մ էք քաղաքականութեամբ:

Շ. Ա. - Ես հետաքրքրուում եմ քաղաքական այրերով եւ քաղաքական կին գործիչներով՝ սպասումով տեսնելու, թէ ինչ են նրանք անելու: Խոստումներ, խոստումներ: Երէկ ես հիւրընկալում էի իմ ընկեր Բեսանսենոյին: Ես յարգում եմ նրան: Ես սիրում եմ նրան: Նա անկեղծ է: Նա գիշերներն է աշխատում իր թղթապանակների վրայ: Այլոց մասին ես ոչինչ չգիտեմ: Նրանց ելույթներն ուրիշներն են գրում:

Nouvel d'Armenie - Դուք անելի շուտ գո՞հ էք այս վերադարձից: Շ. Ա. - Ես ուրախ եմ: Ես շատերի ամբարտաւանութիւնը կտրեցի: Նրանք, ովքեր վատ էին գրում, ժամանակ առ ժամանակ նորից փոքրիկ «բայց»-եր են դնում, բայց աւելի պակաս ընդգծուած: Նրանք ինչ երբէք չեն ների վերադառնալու համար: Մահը ինչ կը ներէ: Բայց ես պատրաստ չեմ մեռնել: Լաւ լսէք ինչ, Արա: Ես ուզում եմ, որ այնտեղ՝ երկրում, որն արդէն մեռնելու վրայ է, իմ ժողովրդի համար մի բան տեղի ունենայ: Որքա՞ն են այնտեղ: Ինչ ասում են՝ 2,3 մլն: Իշխանութիւնները մատնացոյց են անում 3,6 մլն: Բայց դա ճիշտ չէ: Շատ կարճ ժամանակում նրանց

թիւր կը դառնայ 1 մլն 800 հազար: Եւ կ'իջնենք մինչեւ 1 մլն բնակչութիւն՝ մաֆիոզների ձեռքում: Այդ պարագայում պէտք է յոյաներս չիւնացիների վրա՞ դնենք երկիրը վերաբնակեցնելու համար:

Ես կ'ուզենայի, որ իւրաքանչիւր հայ ինքն իրեն հարց տայ. ի՞նչ նպատակ եմ ես բերում իմ նախնիների երկրին: Ի՞նչ եմ ես տալիս՝ մերժելով այս մէկը, չընդունելով այս միւսը: Եւ ինքն իրեն հաշիւ կը տայ, որ ոչինչ էլ չի տալիս: Ինչպէս Դուք տեսնում էք, ես ասում եմ այն, ինչ մտածում եմ:

Nouvel d'Armenie - Իրականում Ձեր ցանկութիւնը հայերին օգնե՞լ է: Շ. Ա. - Պէտք է նրանց օգնել, թուրքերին նոյնպէս: Մեր միջեւ դա պէտք է լուծուի, որոշուի, եթէ մենք կամքի տեր մարդիկ ենք: Nouvel d'Armenie - Բայց հայտնի, Դուք մի փոքր գրեթէ կողոպտում էք նրանց, այնուամենայնիւ: Դուք Ձեզ հաշիւ տալի՞ս էք:

Շ. Ա. - Ես իմ կեանքն անցկացրել եմ հասարակութեանը կողոպտելով: Եւ մերոնց հետ նոյնը չե՞մ անի: Մի օր իմ քոյրն ինչ ասաց. «Դու հաւատո՞ւմ ես, որ թուրքը կարող է քեզ սպաննել»: Հայը նոյնպէս կարող է դա անել, նոյն պատճառներով: Ես ուրիշ եմ գնում: Ես այսպէս եմ տեսնում իրողութիւնները: Վնաս եմ կրում: Գուցէ: Բայց թող ինչ մի լուծում ցոյց տան: Ոչ թէ բողոքներ: Եւ յետո՞յ՝ առանց տաքուների. ես մի օր ՀՀ նախագահի հետ խօսեցի իսլամացած հայերի խնդրի մասին՝ ասելով, որ մի բան պէտք է անել: Ամէն կողմից լքուած այս մարդիկ դժբախտ են: Պէտք է նրանց օգնել:

Մենք իսլամին դէմ չենք: Հայաստանում մենք 6 հրաշալի մզկիթ ունենք, որոնք փրկուել են՝ չնայած Ստալինի հրամանին, ով ուզում էր դրանք ոչնչացնել: Իրանն անում է անհրաժեշտը դրանք վերանորոգելու համար: Մենք ազգ ենք: Ազգը բաղկացած է ամեն տեսակի մարդկանցից՝ լաւագոյններից մինչեւ վատագոյններ, եւ ամէն կրօնի դաւանող: Նորմալ է, որ ունենք քրիստոնեաներ, հրեաներ եւ մուսուլմաններ: Հայաստանը պէտք է այս ուղղութեամբ ընթանայ, որով գնում է նաեւ Եւրոպան:

Nouvel d'Armenie - Դուք ճանաչել եք Հայաստանի երեք մախազահներին: Կարո՞ղ էք մեզ նրանց մասին պատմել:

Շ. Ա. - Ոչ, դա իմ գործը չէ: Նրանք բարի կամքի տեր մարդիկ են: Բայց երբեմն իրավիճակները փոխում են կամքը: Ամէն դէպքում, նախագահներից ոչ մէկը ինչ երբեւէ «ոչ» չի ասել: Միտուցէ ես կը նախընտրէի, որ ինչ դա ասէին: Արա, այսօր ի՞նչ է նշանակում լինել հայ: Ես կ'ուզենայի դա իմանալ: Ի՞նչ է նշանակում արիւնքահայ: Լաւ ուտե՞լ: Լաւ խմե՞լ: Ունենալ սեփական բուստիկ եւ խօսել ցեղապանութեան մասին: Դա՞ է հայ լինելը: Սա շատ քիչ է:

Հարցազրոյցը՝ Արա Թորանեանի Ֆրանսերէնից թարգմանութիւնը՝ Լիանա Մայրաբեանի

«ՀԵՏՔ»

**Չեր ճանուցումները Վաստեցեք «Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
massis2@earthlink.net

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Fax :-----

**ՄԱՍԻՍ**  
**ԱՄԵՆԱՎԱՍԱՀԵԼԻ ԱԳՔԻԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒԲԵՐՈՒ**



# ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Շաբաթականում էջ 15-էն

գրոհը արդէն մի քանի վայրկեաններին ընթացքում, խուճապ ու խառնաշփոթութիւն է ստեղծել թշնամու ճամբարում, զինուորները ժայռերի ու կոճղերի վրայից թափախուցնելով փախչում էին: Թշնամու բանակատեղիի վրայ հայերի կողմից զանգուածային յարձակման տպաւորութիւն էր ստեղծուել, սպաները հակասական հրամաններ են արձակել, բանակը կէս ժամից յետոյ նահանջի հրաման է ստացել, իսկ հրամանատարը սուրն ու կոշիկները թողած՝ փախչել է: Մինչ լուսաբաց անտառը մաքրուել է փախչող զինուորներից, գէնքի, գինամթերքի ու պարէնի որոշ ռազմաւար է վերցրուել: Այդ մուծ գիշերին լեռնականները իրենց պատերազմի աստուծոյ եղէգան փողի փրկութեան լոյսն էին վառել այդ կիրճում:

Թուրքը, վստահ չլինելով ռազմական ուժով ընկճելու լեռնականների դիմադրական ոգին, զօրաշարժի է ենթարկել շրջակայ բնակավայրերի մահմետական բնակչութեան տասնհինգ հազարանոց հրոսախուճը՝ դիմադրութեան մասնակիցներին սովամահ անելու նպատակով շրջափակելու լեռը: Լեռան խիստ գառնիթափ կողերը ընկնում էին ալեկոծ ծովի ջրերին, կարծես՝ ռազմի երթից յոգնած ոտքերը հովացնելու աչնտեղ: Ոչ մէկ նաւահանգիստ կար նրա կողերին փարած եւ ոչ էլ այլ հաղորդակցութիւն՝ ուրիշ նաւահանգիստների հետ:

Լեռը պաշարուել էր, սպառուում էր իրենց հետ բերած ուտելիքի պաշարը: Դիմադրութեան երեսուն օրերի մարտերից յետոյ, սկսել էին սնուել մանրեղջերաւոր անասունների հաշուին՝ օգտագործելով նրանց կաթը հիւանդների ու փոքրերի համար եւ ամէն օր մորթելով մի քանի այծ ու ոչխար: Դէպի իրենց գիւղերի արտեր գիշերային յանդուգն արշաւներից բերած հացահատիկը եւ մրգերը չէին կարող լրիւ բաւարարել իրենց սննդի պահանջը: Անասունների հօտի մասմթերքի հաշուարկով եզրակացրել էին, որ այն կարող էր բաւականացնել միայն երկու շաբաթ:

Թէեւ երկարատեւ դիմադրութիւնը փրկութեան ստոյգ յոյս չէր ներշնչում, սակայն վճռել էին շարունակել այն եւ մտածել նաեւ ծովով շրջափակումից դուրս գալու մասին: Սուրհանդակների միջոցով խնդրագիր էին ուղարկել Հալէպի ամբերիկեան հիւպատոսին՝ ծովով օգնութիւն ուղարկելու համար: Քիչ հաւանական էր եղել, որ այն հասած լինէր հասցէատիրոջը: Մի քաջ լողորդ երիտասարդ էին ուղարկել յիսուն քիլոմետր դէպի հիւսիս գտնուող Ալեքսանտրեթ նաւահանգիստ՝ իմանալու համար, որ արդեօք դաշնակից ռազմաւաճակներ խարսխում էին այնտեղ: Նա անցնելով թրքական շրջափակման սահմանագիծը՝ մօտակաջ բլուրներից դիտարկել էր նաւահանգիստը. այնտեղ ռազմաւաճակ խարսխած չէր եղել:

Երեք օրինակներով կոչ էին պատրաստել՝ ուղղուած անգլիական, ֆրանսական, ռուսական, ամերիկեան եւ իտալական ռազմաւաճակի հրամանատարներին: Ծովափին երեք յանդուգն ու վարժ

լողորդների էին հերթապահ նշանակած եղել՝ հսկելու համար ափամերձ ջրերում երեւացած նաւերի անցքին: Ահա՛ կրճատումներով այդ կոչը:

«Մենք, հայկական վեց գիւղերի ժողովուրդը, բոլորը միասին մօտաւորապէս հինգ հազար հոգի, Մուսա Տաղի Տամլաճըկ կոչուած այս հատուածում, որը Սուէտիայից հիւսիս-արեւմուտք, ծովածոցի կողքով երեք ժամուայ ճանապարհ է:

«Մենք, թրքական բարբարոսութիւնից եւ տանջանքներից ապաստան ենք գտել այստեղ եւ մեզանից շատերը մոլեգնած են մեր կանանց պատուի համար:

«Պարոն, դուք պէտք է իմացած լինէք բնաջնջման այս քաղաքականութեան մասին, որ թուրքերը գործադրում են մեր ազգի նկատմամբ: Հայերին ցիրուցան անելու քողի տակ, իբր թէ՛ ըմբոստութիւնը կանխելու, մեր ժողովուրդի գաւակները վտարուած են իրենց տներից, գրկուած՝ իրենց պարտէզներից, իրենց աչգիներից եւ իրենց բոլոր սեփականութիւններից:

«Մօտաւորապէս քառասուն օր առաջ կառավարութիւնը տեղեկացրեց մեզ, որ մեր վեց գիւղերը պէտք էր տարագրուէին: Մենք աւելի սիրով գերադասեցինք քաշուել մեր լեռները, քան՝ դրան հնազանդուել: Մենք հիմա քիչ ուտելիք ունենք եւ զօրքերը շրջապատում են մեզ: Մենք հինգ կատարի ճակատամարտեր ենք ունեցել: Աստուած մեզ յաղթանակ է շնորհել, սակայն յաջորդ անգամ շատ աւելի խոշոր ուժերի դէմ պիտի կանգնենք:

«Պարոն, Քրիստոսի անունով կոչ ենք անում ձեզ:

«Մենք թախանձում ենք ձեզ՝ փոխադրել մեզ Կիպրոս կամ այլ ազատ երկիր: Մեր ժողովուրդը ծոյլ չէ: Մենք պիտի վաստակենք մեր հացը, եթէ աշխատանքով ապահովուենք: Եթէ այս չափազանց շատ կը լինէր շնորհելու, առնուազն փոխադրել մեր կանանց, ծեր մարդկանց ու երեխաներին, սպառազինէք մեզ բաւարար գէնքերով, զինամթերքով եւ մեր ամբողջ զօրութեամբ պիտի պայքարենք ձեզ հետ՝ թրքական ուժերի դէմ: Բարի եղէք, պարոն, մի՛ սպասէք, մինչեւ որ չափից աւելի ուշ լինի:

«Յարգանքով՝ ձեր ծառան, այստեղի բոլոր քրիստոնեաների անունից՝

Սեպտեմբեր 2  
Տիգրան Անդրէասեան»:  
\*\*\*\*\*

Օրեր էին անցել, բայց որեւէ նաւ չէր երեւացել: Տիգրանի խորհուրդով ու խմբագրութեամբ, երկու սպիտակ դրօշներ էին պատրաստել՝ մէկը անգլերէն սեւ տառերով «Քրիստոնեաները դժբախտութեան մէջ են: Փրկեցէք»: Իսկ միւսը՝ նոյն բովանդակութեամբ, կարմիր խաչով: Դրօշները ամբարացրել էին մի ծառի գագաթին՝ նրանց մօտ շուրջօրեայ հերթապահներ նշանակելով:

Թուրքերը նորից յարձակում էին գործել, եւ նրանց դէմ մի քանի յաղթական մարտեր էին մղուել: Դիտարկման կէտերի մէկից գլաժայռեր էին գլորել թշնամու գործի վրայ՝ կործանարար վնասներ պատճառելով նրան: Այնուհետեւ, յանձնուելու համար, թուրքերը վիրաւորական կոչեր էին ուղղել, սա-

կայն ապստամբները աւելի ազդու ձեւով էին պատասխանել նրանց:

Մի կիրակի առաւօտ Տիգրանի խրճիթին էր վազելով մօտեցել մի մարդ՝ գոռալով, որ մի ռազմաւաճակ էր երեւացել, պատասխանել իրենց ձեռքի շարժումներին եւ սկսել աւելի մօտենալ ծովափին: Այն ֆրանսական «Կիշեն» ռազմաւաճակ էր եղել, որը ծովափին մօտենալու համար նաւակ էր իջեցրել: Մի քանի երիտասարդներ անմիջապէս դէպի նաւ էին լողացել: Նաւապետը պահանջել է պատուիրակութիւն ուղարկել՝ տիրող կացութիւնը բացատրելու համար: Նա նաւատորմի ծովակալին հեռագիր էր ուղարկել, որը ժամանելով ծովափ, առանց իր կառավարութեան նախնական թոյլտուութեան, կարգադրել է լեռ ապաստանած բոլոր մարդկանց նաւերի վրայ վերցնել: Հրաւիրել էր ներկայանալու նաեւ մի անգլիական ռազմաւաճակ: Երկու օրերի նաւարկութիւնից յետոյ, Սեպտեմբերի 14-16-ին հասել էին Փորթ Սայիտ՝ անգլիական իշխանութիւնների կողմից տրամադրուած վրանների ճամբար:

Տիգրանը երախտագիտութիւն է յայտնել ճամբարի կազմակերպիչ պարոն Ուիլիըմ Ս. Հորմալոլըրին, տիկին իլկուտին եւ օրիորդ Ռուսելլին՝ իրենց նկատմամբ ցուցաբերած անխոշ Զանքերի համար եւ՝ Գահիրէի Հայկական կարմիր խաչի ընկերութեանը, որի պատուաւոր նախագահն էր եղել «Կոտակ» ընկերութեան տնօրէն պարոն Ֆերմանեանը, իսկ քարտուղարը՝ փրոֆեսէօր Գայալեանը, որոնք ճամբար էին ուղարկած եղել երեք բժիշկներից ու երեք բուժքոյրերից բաղկացած բուժական անձնակազմ:

Կատարուած ճշգրիտ վիճակագրութեան համաձայն, Փորթ Սայիտ ժամանածների թուաքանակը եղել է՝

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԱԾ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱԻԱՏՈՐՄԻ ՌԱԶՄԱՆԱԻԵՐԻ ԿՈՂՄԻՑ**

(Կազմուած Եգիպտոսի լուսաւորչական համայնքի եպիսկոպոս Թորգոմի կողմից)

Գաղթականների թուաքանակը

Ճշգրիտ վիճակագրութիւն էր կատարուած այդտեղ, որը ցոյց է տալիս գաղթականների թուաքանակի կազմը՝

4200, ներառեալ՝  
915 տղամարդ  
1408 կին  
702 տղայ  
539 աղջիկ  
639 երեխայ

Գաղթականների ծագումը  
Նրանք բոլորը եկան Սելեւկիայի գիւղերից (Հալէպի Վիլայէթ, Անթաքիայի սանճագ, Լեֆֆիայի գաւառ), ներառեալ.

160 ընտանիք Խըտըրպէկ գիւղից  
228 ընտանիք Եողունուղ գիւղից  
220 ընտանիք Հաճի Հապապլի գիւղից  
221 ընտանիք Վազըֆ գիւղից  
10 ընտանիք Քէպուսիէի գիւղից  
170 ընտանիք Պիթիաս գիւղից

Ընդհանուր՝ 868

Սակայն այս ընտանիքները չեն ներկայացնում ընդհանուր թուաքանակը այն ընտանիքների, որոնք բնակուած էին իւրաքանչիւր գիւղում, քանի որ.

240 ընտանիք Քեպուսիէ գիւղում

2 ընտանիք Եողունուղ գիւղում

80 ընտանիք Հաճի Հապապլի գիւղում

10 ընտանիք Պիթիաս գիւղում

Ընդհանուր՝ 332

Այսպիսով, 332 ընտանիքներ տանը, իրենց գիւղերում մնացին: Նրանք տարագրուեցին:

Այսպէս, իրենց լեռները գրկած ռանչպարներ ազգի արժանապատուութեան, կանանց պատուի, գաւակների ու ծնողների կեանքի եւ ազատ ապրելու տենչանքի համար յիսուններեք օրեր դիւցազնօրէն մարտնչել էին թշնամու բազմահազար կանոնաւոր զօրքի ու աշխարհագորի դէմ եւ հինգ յաղթական ճակատամարտեր մղելուց յետոյ, հանգրուանել այդ վրանների քաղաքը:

## ԱՐԱԳԱԾԻ ԿԱՏԱՐԻՆ «Ի ԽՆԴԻՐ ԼՈՒՍԱԻՈՐԶԻ ԿԱՆԹԵՂԻ»

Շաբաթականում էջ 13-էն

նած էինք 1949 թուի Սեպտեմբերին, եւ տարի մը ետք, ամբան արձակուրդի գացած մեր ծնողաց մօտ: Եգիպտոս արձակուրդի եկած էր նաեւ Կիլիկիոյ գիսնական Հայրապետը Տ.Տ. Գարեգին Ա Յոսէփեանց Կաթողիկոսը, Արագած Լեռան գագաթը բարձրացող հերոս ուխտագնացը, որուն կ'ընկերանար Դպրեվանքի տեսուչ Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեան: Հայրապետը կ'իջեանէր բուրգերուն մօտիկ Միւնէ Հառու կոչուած յատնի պանդոկը երբ Հայրապետին աջհամբոյրի գացինք երկու դպրեվանքի ուսանողներս՝ առաջնորդութեամբ տեսուչ Սրբազանին:

Վեհափառ Հայրապետը մեզ ընդունեց եւ հայրական սիրով հարցումներ ալ հարցուց թէ ինչ սորված էինք Դպրեվանքէն ներս: Կը յիշեմ, ըսի թէ իր «Խաղբակեանք Կամ Պոռչեանք» պատկառելի

հատորը մեր ուսուցիչ Սիմոն Սիմոնեանի ցուցմուքով կարդացեր էի եւ շարադրութիւն մըն ալ գրած որպէս պարտականութիւն: Զարմանքով եւ ուրախ ժպիտով մի քանի հաստատումներ ալ ինք ըրաւ իրեն յատուկ խանդով: Այսքանը շատ լաւ, եւ սակայն մնացեալն էր արկածալիցն ու անպատասխանատու քայլը տեսուչ սրբազանին որուն սկիզբն էր հետեւեցանք:

«Պիտի բարձրանանք բուրգերուն գագաթը» ըսաւ: Մերժեցինք մեր վախին մէջ: «Ինձի հետեւեցէք» ըսելով մեզ ժայռ առ ժայռ սոսկալի վերելքին ենթարկեց, իր պարեգոտի փէշերը հաւաքած: Ինչ խօսք, բարձրացանք ասով եւ դողով: Իսկ վայրէջքը՝ լեղապատու: Բուրգերուն գագաթը ոչինչ կար ներշնչող, բացի մեր վախէն ու ներքին զայրոյթէն, թէ ինչ գործ ունէինք արծիւներու եւ ազուաներու փարաւոնեան այդ բարձունքին վրայ:





**Ճաշկերոյթ  
Պարահանդէս  
Նուիրուած**

**Հ.Մ.Մ.ի 90 Ամեակին**  
կազմակերպութեամբ

**Հ.Մ.Մ.ի Շրջանային Վարչութեան**

Օրուան հանդիսութիւնը պիտի խանդավառէ  
յատուկ Լիբանանէն ժամանած, սիրուած երգիչ՝

**Պերճ Նազգաշեան**

**Տեղի կ'ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 26, 2011**  
**երեկոյեան ժամը 8:30 էն սկսեալ**

**Deluxe Banquet Hall**

**Շքեղ սրահէն ներս՝**

**237 East Olive Avenue, Burbank, CA 91502**

Մանրամասնութեան համար հեռաձայնել  
(626) 485-6434 (818) 324-057

Մուտքի Նուէր \$ 75.00